

Ուսանողի ձեռնարկ

5

Հաջողակ քրիստոնեական կենսակերպ Դառնալ հաջողակ Աստծո տեսակետից



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Հաջողակ քրիստոնեական կենսակերպ

Դառնալ հաջողակ Աստծո տեսակետից

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



**Հաջողակ քրիստոնեական կենսակերպ
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի**

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Successful Christian Living, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Վերջին անգամ վերանայվել է. 12-2020

Բովանդակություն

Ներածություն	4
Գլուխ 1. Ո՞վ եմ ես	5
Ա. Ի՞նչ է ասում Աստված իմ մասին:	5
Բ. Ես ունեմ ֆիզիկական մարմին:	7
Գ. Ես ունեմ ինքնություն:	8
Դ. Ես ունեմ հոգի:	11
Գլուխ 2. Հաջողակ քրիստոնյա դառնալու հինգ քայլեր	12
Ա. Որո՞նք են այդ հինգ քայլերը.	13
1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:	13
2. Փոխել մտածելակերպը:	14
3. Դնել նոր նպատակներ:	17
4. Սովորել ղեկավարել զգացմունքները:	23
5. Պատմել մարդկանց, թե ինչ է արել Քրիստոսը քո կյանքում:	26
Բ. Ինչպե՞ս սկսել օգտագործել հինգ քայլերը:	27
Գլուխ 3. Սուրբ Հոգին	31
Ա. Ո՞վ է Սուրբ Հոգին:	31
Բ. Ի՞նչ է անում Սուրբ Հոգին քո կյանքում, երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա:.....	32
Գ. Ի՞նչ է անում Սուրբ Հոգին քո կյանքում այն բանից հետո, երբ դու արդեն դարձել ես ճշմարիտ քրիստոնյա:.....	35

Ներածություն

Այսօր մենք շատ ենք լսում խոսակցություններ հաջողության մասին: Փողը հանդիսանում է այն հիմնական միջոցներից մեկը, որով մարդիկ չափում են հաջողությունը: Եթե փող շատ ունես, ապա աշխարհը կասի, որ դու հաջողակ ես: Քաղաքական գործիչները, երբ հաղթում են ընտրություններում, համարվում են հաջողակ: Նրանք մեծ հաջողություն են համարում, երբ ստեղծում են օրենքներ և ծրագրեր, որոնք օգնում են մարդկանց ավելի բարգավաճել:

Այս դասընթացը հաջողության վերաբերյալ իր մեկնաբանությամբ տարբերվում է այն բանից, ինչը ընդունված է աշխարհում, ինչը աշխարհն անվանում է հաջողություն: Մենք ուզում ենք հետազոտել, թե ինչ է ասում Աստված հաջողության մասին, և թե ինչպես կարող ենք հաջողակ քրիստոնյաներ դառնալ: Աստված հաջողությունն այլ կերպ է չափում, քան հարուստ և հզոր մարդիկ, որոնք ճշմարիտ հավատացյալներ չեն: Ի՞նչ կասի Աստված, եթե նայի քո կյանքին: Արդյո՞ք Նա քեզ հաջողակ կհամարի Իր տեսակետից: Ի՞նչ է Նա փնտրում քո կյանքում, որպեսզի կարողանա ասել. «Ես հպարտ եմ քեզնով: Դու շատ հաջողակ քրիստոնյա ես»:

Աստվածաշունչը լի է ուսուցումներով և փոխաբերություններով՝ ցույց տալու, թե ինչն է Աստված համարում հաջողություն: Այս դասընթացին մենք կքննարկենք, թե դու ինչպես կարող ես հաջողակ քրիստոնյա դառնալ: Կան երկու հիմնական ճշմարտություններ, որ մենք պետք է սովորենք հենց սկզբից: Առաջինը. դու անհրաժեշտություն չունես կատարյալ լինելու՝ նախքան Աստված կասի, որ դու հաջողակ քրիստոնյա ես: Եթե անգամ դու ձախողվես, դեռ չի նշանակում, որ Աստված հույսը կտրել է քեզնից:

Երկրորդ. Սուրբ Հոգին միակն է, Ով կարող է քեզ ուժ տալ, որի կարիքը դու ունես հաջողակ քրիստոնյա դառնալու համար: Անհնարին է սեփական ուժերով Աստծուն հաճեցնել: Մենք ամեն պատճառ ունենք երջանիկ լինելու, քանի որ Աստված խոստացել է մեզ հետ լինել և տալ այն զորությունը, որի կարիքը մենք ունենք, որպեսզի ապրենք Նրա համար:

3-րդ գլխում մենք մանրամասն կտեսնենք, թե ինչպես է Սուրբ Հոգին անձամբ ներգրավված քեզ օգնելու, որպեսզի դառնաս հաջողակ քրիստոնյա:

Գլուխ 1.

Ո՞վ եմ ես

Երբևէ մտածե՞լ ես, թե ինչպիսին ես դու իրականում. ոչ թե քո ֆիզիկական մարմինը, այլ իրական անհատականությունը, որը խորը քո ներսում է: Աստված մեզ ստեղծել է՝ նպատակ ունենալով, որ մենք լիարժեք անձնավորություն դառնանք: Եթե ուզում ենք հաջողակ քրիստոնյա լինել, պետք է հասկանանք, թե ով ենք մենք:

Եթե օգտագործում ես ֆիզիկական գեղեցկության, փողի կամ իշխանության վերաբերյալ աշխարհի չափանիշները, որպեսզի հասկանաս, թե ով ես դու, ապա հեշտությամբ կընկճվես: Երբ նայես քո անցյալին, ապա, հնարավոր է, հուսահատվես լուրջ ձախողումների և կատարած սխալների պատճառով:

Աստվածաշնչում Աստված մի քանի բաներ է ասում այն մասին, թե ինչպիսին է Նա մեզ ստեղծել: Ավելի մոտ տեսնենք, թե ինչ է մտածում Աստված մեր մասին:

Ա. Ի՞նչ է ասում Աստված իմ մասին:

Աստված ուզում է մտերիմ փոխհարաբերություններ ունենալ քեզ հետ: Մարդը, ով ճշմարիտ քրիստոնյա չէ, խզված հարաբերություններ ունի Աստծո հետ: Հետևյալ նյութերը գրված են՝ հաշվի առնելով այն տեսակետը, որ դու ճշմարիտ քրիստոնյա ես:

Եթե դեռ որոշում չես ընդունել՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալու, ապա կարդա այս նյութը և ինքդ քեզ հարցրու. «Ես այնպիսի՞ն եմ, ինչպիսին կցանկանայի, որ Աստված ինձ տեսներ, երբ ինձ անդրադառնար»:

1. Ես Աստծո զավակ եմ:

Աստված քեզ տեսնում է որպես Իր ընտանիքի անդամ: Դու Նրա զավակն ես: Տե՛ս Հովհաննես 1:12 և Եփեսացիներին 1:4-5:

2. Ես սիրված եմ. Աստված սիրում է ինձ:

Աստված ամեն բանից առավել սիրում է քեզ: Նրա սերն իրական է, մաքուր, ապահով, առանց որևէ ծածուկ դրդապատճառների: Տե՛ս Հովհաննես 3:16 և Ա Հովհաննես 3:1:

3. Ես արժեքավոր եմ:

Աստված ասում է, որ դու արժեքավոր ես: Դու Նրա համար ավելի արժեքավոր ես, քան աշխարհի բոլոր հարստությունները: Տե՛ս Դուկաս 15:7-10 և Մատթեոս 6:26: Երբ Հիսուսը մահացավ խաչի վրա, որպեսզի վճարեր մեր մեղքերի համար, հստակորեն ցույց տվեց, թե ինչքան շատ է հոգ տանում քեզ համար: Նա այս բոլորն արեց, որպեսզի դու կարողանաս դառնալ Նրա ընկերը և հավիտենությունն անցկացնել Նրա հետ:

4. Ես գնված անձնավորություն եմ:

Նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը, դու մեղքի ստրուկ էիր, հանցավոր և դատապարտված էիր դժոխքի: Սակայն Հիսուսը գնեց քո ազատությունը: Տե՛ս Ա Կորնթացիներին 6:19-20:

5. Ես Հիսուս Քրիստոսի ծառան (հետևորդն) եմ:

Երբ դու ճշմարիտ քրիստոնյա ես դառնում, թույլ ես տալիս Հիսուսին՝ դառնալ քո կյանքի Առաջնորդը: Նա քո Առաջնորդն է: Դու ծառայում ես Նրան: Նա ասում է քեզ, թե ինչ անես: Դու անում ես այն, ինչ Նա է ուզում, որ անես: Դու պատասխանատվություն չունես Աստծուն ասելու, թե Նա ինչ անի: Տե՛ս Ա Կորնթացիներին 6:19-20 և Հովհաննես 15:1-11:

6. Ես Աստծո ընկերն եմ:

Նա սիրում է քեզ և Իր ընկերն է կոչում: Աստված ուզում է լինել քո լավագույն ընկերը: Տե՛ս Հովհաննես 15:12-16:

7. Ես դեռ աճում եմ (այնպես որ, խնդրում եմ, համբերատա՛ր եղեք իմ հանդեպ):

Աստված քեզ ստեղծել է, որպեսզի աճես: Սա շարունակվում է մեր ամբողջ կյանքի ընթացքում: Կարևոր է հիշել, որ դու պետք է շարունակես աճել Աստծո ուզած ձևով: Տե՛ս Փիլիպպեցիներին 1:6:

Եթե մենք ընդունում ենք այն, ինչ Աստված է մեր մասին ասում Աստվածաշնչում, մենք հասկանում ենք, որ Նա մեզնից ամեն մեկին նայում է որպես առանձնահատուկ անձնավորության: Աստված քեզ շատ մոտիկից է ճանաչում: Նա է քեզ ստեղծել և սիրում է Իր ստեղծագործությունը: Հիմա դու, Նրա տեսակետից, ունես հնարավորություններով լի մի ապագա, որը կարող է քո կյանքը դարձնել իմաստալից և հաջողակ:

Տեսնենք, թե ինչպիսին է Աստված ստեղծել մեզ: Մեզնից ոչ մեկը կատարելապես նման չէ մյուսին, սակայն շատ բաներով մենք նման ենք իրար:

Ո՞վ եմ ես:

Բ. Ես ունեմ ֆիզիկական մարմին:

1. Հինգ զգայարաններ
Տեսողություն
Լսողություն
Հոտառություն
Համի զգացողություն
Շոշափելու ունակություն
2. Ֆիզիկական տարերքներ
Ջուր
Մսուկ
Օդ



Գ. Ես ունեմ ինքնություն:

(հոգեբանական կողմեր)

1. Իմ մտքերը:
2. Իմ զգացմունքները:
3. Իմ որոշումները:
4. Իմ խղճմտանքը:

Դ. Ես ունեմ հոգի:

Որտեղ ապրում է Աստված:

Հռոմեացիներին 8:9

Բ. Ես ունեմ ֆիզիկական մարմին:

Մեզնից ամեն մեկն ունի մարմին՝ երկու ձեռքեր, մեկ գլուխ, երկու ոտքեր և այլն: Ակնհայտ է, որ մեզնից յուրաքանչյուրը տարբեր տեսք ունի: Մակայն մենք բոլորս նույն ֆիզիկական անդամներից ենք բաղկացած:

- Դու կարողանում ես տեսնել քո աչքերով:
- Դու կարողանում ես լսել քո ականջներով:
- Դու կարողանում ես հոտոտել քո քթով:
- Դու կարողանում ես համտեսել քո լեզվով:
- Դու կարողանում ես շոշափել իրերը քո ձեռքերով, ոտքերով ու մարմնի այլ մասերով:

Քո ֆիզիկական մարմինը կատարյալ հրաշք է: Դրա բոլոր մասերը միասին են գործում: Գիտությունն ուսումնասիրել է մեր մարմնի տարբեր մասերը և հայտնաբերել, որ դրանցից ամեն մեկը ծայրահեղ բարդ է: Աստված, իրոք, հրաշալի աշխատանք է կատարել մեր մարմինները ստեղծելիս:

Մենք բոլորս գիտենք, թե ինչ է նշանակում հիվանդ լինել: Այդ ընթացքում մեր մարմինն այնպես չի գործում, ինչպես Աստված է նախատեսել, որ այն գործի: Մեղքը նույնպես ազդում է մեր ֆիզիկական մարմնի վրա: Ամուսնական կյանքից դուրս սեռական կյանքը նույնպես կարող է արդյունքում վեներական հիվանդություններ կամ ՁԻԱՀ առաջացնել: Ծխելը կարող է քաղցկեղ առաջացնել: Ալկոհոլը կարող է լյարդի հիվանդության պատճառ դառնալ:

Դու ունես ֆիզիկական մարմին, սակայն դու ավելին ես, քան՝ ոսկորներ, մկաններ ու մաշկ: Դու ունես ինքնություն: Քո իրական «Ես»-ը քո ֆիզիկական մարմնի ներսում է գտնվում:

Գ. Ես ունեմ ինքնություն:

Դու կարող ես ինչ-որ մեկին շատ նման լինել (ֆիզիկապես), հատկապես, եթե զույգ եղբայր կամ քույր ունես: Սակայն մեզնից ամեն մեկն առանձնահատուկ է, երբ հարցը վերաբերում է ինքնությունները համեմատելուն: Չորս մեծ հանգամանքներ ազդեցություն են ունենում քո ինքնության վրա: Դիտարկենք դրանք:

1. Իմ մտքերը

Դու ունես ուղեղ, որը ֆիզիկական օրգան է: Սակայն քո ուղեղի ներսում գտնվում են մտքերն ու հիշողությունները: Քո մտքերը քեզ առանձնահատուկ են դարձնում: Այն, ինչ մտածում ես որևէ կոնկրետ բանի մասին, քո հավատալիքներն են, կարծիքները: Օրինակ, «Ես կարծում եմ, որ միսն ինձ համար օգտակար է, հատկապես մսի մի մեծ հյութալի կտորը»: «Ես հավատում եմ, որ Աստված կա, որ Նա սիրում է ինձ»:

Քո կյանքի անցած տարիների ընթացքում քո մեջ նաև մտածելակերպ է ձևավորվել: Դրանք կոչվում են վերաբերմունքներ: Դու որոշակի վերաբերմունք ունես աշխատանքի հանդեպ, դա մտքերի ու կարծիքների մի ամբողջ խումբ է, որն ազդում է քո գործողությունների և զգացողությունների վրա, երբ ինչ-որ աշխատանք ես կատարում:

Վերաբերմունքների թեման ավելի մանրամասնորեն քննարկված է *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի՝ *Վերաբերմունքներ* բաժնում:

2. Իմ զգացմունքները:

Քո զգացմունքները մեծ ազդեցություն ունեն քո ինքնության վրա: Թե ինչպես (և երբ) ես արտահայտում քո զգացմունքները, բավականին շատ է ասում քո ինքնության մասին: Ոչ ոք չի կարող ամբողջությամբ հասկանալ, թե կոնկրետ ինչ ես դու զգում տվյալ իրավիճակում: Սակայն որոշ մարդիկ կարող են հասկանալ քեզ, քանի որ իրենք էլ ունեն նույն զգացումները՝ բարկության, տխրության, խաղաղության, վախի և այլն:

3. Իմ որոշումները:

Դու ունես կամք: Դու կարող ես կայացնել քո սեփական որոշումները: Ինքնության այս մասը հատկապես յուրահատուկ է քեզ: Աստված մեզնից յուրաքանչյուրին ստեղծել է որոշումներ կայացնելու ունակությամբ: Մարդիկ կարող են ազդել մեզ վրա, սակայն, միևնույն է, մենք ունենք կարողություն որոշելու, թե ինչ ենք անելու: Մեզնից որոշները հենց այդ պատճառով էլ խնդիրներ են ունենում ուստիկանության հետ, քանի որ մերժել և անհնազանդ ենք եղել մարդկանց ստեղծած օրենքներին: Իսկ որոշներն էլ ձերբակալվել են:

Աստված մեզ պատասխանատվության է կանչում մեր կատարած որոշումների համար, որոնց հարցում չենք կարող մեղադրել այլ մարդկանց: Մենք պետք է առերեսվենք մեր կայացրած որոշումների հետևանքների հետ, եթե անզամ ամեն բան այնպես չընթանա, ինչպես մենք էինք ակնկալում:

Աստված քեզ մեծ իշխանություն է տվել որոշումներ կայացնելու հարցում: Դու կարողություն ես ունենում դառնալու հաջողակ քրիստոնյա, երբ որոշում ես հնազանդվել Աստծուն:

4. Իմ խղճմտանքը:

Կենդանիները ունակ են մտածելու, զգալու և որոշումներ կայացնելու: Որոշ կենդանիներ շատ խելացի են: Սակայն Աստված մարդկանց կենդանիներից տարբեր է ստեղծել՝ նրանց խղճմտանք տալով: Խղճմտանքը քո էության մի մասն է, որն ասում է, թե երբ ես ինչ-որ բան ճիշտ կամ սխալ արել:

Մենք հաճախ ենք խոսում հանդիմանող խղճմտանքի և մաքուր խղճմտանքի մասին: Եղել է, որ դու քեզ վատ ես զգացել, երբ հասկացել ես, որ ինչ-որ բան սխալ ես արել: Եթե ներքուստ քեզ վատ ես զգացել, ինչո՞ւ է դա տեղի ունեցել. քո խղճմտանքի պատճառով, որը հանդիմանում է քեզ:

Երբ Աստված ստեղծեց մարդուն, Նա խղճմտանք դրեց նրանցից ամեն մեկի մեջ, որպեսզի պատճառաբանություններ չունենանք Աստծո օրենքները խախտելու համար: Որոշ մարդիկ կորցրել են կապն իրենց խղճմտանքի հետ: Շատերն էլ, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ չեն, չեն ցանկանում լսել իրենց խղճմտանքի ձայնը:

Եթե դժվարանում ես լսել Աստծուն, երբ Նա խոսում է քեզ հետ քո խղճմտանքի միջոցով, ապա աղոթի՛ր և խնդրի՛ր Աստծոն օգնությունը, որպեսզի ավելի զգայուն դառնաս քո խղճմտանքի հանդեպ: Սովորի՛ր լսել քո խղճմտանքի ձայնն ու անմիջապես հնազանդվի՛ր դրան: Քո խղճմտանքը կարող է քեզ պաշտպանել փորձության մեջ ընկնելուց:

Եթե քո խղճմտանքը հանդիմանում է քեզ, աղոթի՛ր և խոստովանի՛ր քո մեղքերն Աստծուն: Նա կների քեզ և կհեռացնի մեղքի զգացողությունը: Աստված քեզ մաքուր և խաղաղությամբ լի խղճմտանք կտա:

Դու պետք է զգույշ լինես, որպեսզի չանտեսես խղճմտանքիդ ձայնը, երբ արդեն դարձել ես ճշմարիտ քրիստոնյա: Դու պատասխանատվություն ունես լսել Աստծուն, երբ Նա խոսում է քեզ հետ:

Մեղավորության կեղծ զգացողություն:

Երբեմն նորադարձ քրիստոնյաները շփոթում են մեղավորության կեղծ զգացողությունը ճշմարիտի հետ: Երբ քրիստոնյան մեղք է գործում, նա սովորաբար իրեն մեղավոր է զգում: Սա մեղավորության ճիշտ զգացողություն է, որ Աստծուց է գալիս մեր խղճմտանքի միջոցով: Եթե դու խոստովանես քո մեղքը, Աստված հավատարիմ է, կների քեզ:

Շատ քրիստոնյաներ անկեղծորեն խոստովանելուց հետո էլ դեռ երկար ժամանակ շարունակում են մեղավորության զգացողություն ունենալ: Այս դեպքում, մեղքն Աստծունը չէ, որ չի ներել մեր մեղքերը: Խնդիրը գտնվում է ուղիղ սատանայի ոտքերի մոտ: Հիսուսը սատանային անվանեց «եղբայրներին զրպարտող»: Սա սատանայի սիրած հնարքներից մեկն է: Նա նորից քեզ կհիշեցնի անցյալի մեղքերը, որոնք դու խոստովանել ես: Նա նաև կհիշեցնի, թե որքան սարսափելի էին այդ մեղքերը, և թե որքան է Աստված ատում մեղքը: Նա քեզ կմեղադրի քո ձախողման համար և կփորձի այնքան հուսահատեցնել, որ չշարունակես քրիստոնեական կյանքը:

Մենք պետք է կատարելապես անկեղծ լինենք Աստծոն հետ: Դու չես կարող Աստծուն խաբել քո կեղծ ապաշխարությունով: Նա պատրաստ է ներել բոլոր մեղքերը, եթե մենք անկեղծ խոստովանությունով գանք Իր առջև, ինչպես Դավիթ թագավորն արեց Գ Թագավորացում:

Եթե սատանան շարունակում է հիշեցնել հին մեղքերը, որոնք դու խոստովանել ես, մի՛ փորձիր դիմադրել այդ մտքերին: Մենք պետք է սովորենք հետևել Բ Կորնթացիներին 10:3-5-ում մեզ տրված խորհրդին, որն ասում է՝ գերի վերցնել ամեն մի միտք և դրանք հնազանդեցնել Քրիստոսին: Օգտագործի՛ր այս առիթը՝ համաձայնելու սատանայի բերած մտքի հետ, որ դու, իրոք, գործել ես այդ մեղքը: Բայց հիշեցրո՛ւ նրան, որ Աստված ներել է քեզ: Ապա հայացքդ համի՛ր Աստծուն և շնորհակալություն հայտնի՛ր Նրան Իր ներողամտության համար: Օգտագործի՛ր այս առիթն ինքդ քեզ հիշեցնելու, որ դու ուզում ես ամբողջ սրտով ծառայել

Աստծուն: Հիշեցրո՛ւ ինքդ քեզ, որ մեղքը միշտ ցավալի հետևանքներ է ունենում, իսկ դու ուզում ես յուրաքանչյուր օրն այնպես ապրել, որ հաճեցնես Աստծուն:

Դ. Ես ունեմ հոգի:

Դու նաև կարող ես ասել. «Ես հոգի եմ»: Դու ավելին ես, քան ֆիզիկական մարմինը՝ անհատականության հետ միասին: Աստված մարդկանց ստեղծեց Իր պատկերով: Աստված հոգի է: Նա քեզ հոգի է տվել:

Երբ դու քրիստոնյա ես դառնում, Աստված գալիս և ապրում է քո մեջ: Որտե՞ղ: Քո ուղեղի՞ մեջ: Ո՛չ: Քո սրտո՞ւմ: Ո՛չ: Քո սիրտն ընդամենը արյուն է մղում: Քո զգացմունքների՞ մեջ: Ո՛չ:

Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, Աստված գալիս և ապրում է քո հոգու մեջ: Որտե՞ղ է քո հոգին: Այն քո ներսում է, սակայն ֆիզիկական չէ: Բայց այն իրական է: Քո զգացումները՝ բարկությունը, վախը, ուրախությունը և խաղաղությունն իրական են, սակայն ֆիզիկական չեն: Հնարավոր չէ մարդուն կտրել-բացել և ներսում տեսնել բարկությունը կամ վախը: Սակայն այդ զգացումները մեզնից յուրաքանչյուրի անբաժանելի և իրական մասն են կազմում: Հռոմեացիներին 8:9-11-ն ասում է, որ Աստված ապրում է մեր հոգու մեջ:

Մեղքը կործանում է կյանքը: Մարդիկ, ովքեր ապրում են մեղքի մեջ (ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ չեն), հոգևորապես մեռած են: Նրանց հոգին մահացած է: Աստված չի ապրում նրանց մեջ: Բայց երբ դու գալիս ես Քրիստոսի մոտ և կյանքդ Նրան ես տալիս, Նա կյանք է տալիս քո հոգուն և գալով՝ ապրում է քո մեջ:

Երբ քո ֆիզիկական մարմինը մահանա, քո հոգին կգնա երկինք և հավիտյան կապրի Աստծո հետ, եթե, իհարկե, դու թույլ ես տվել Հիսուսին՝ ներել քո մեղքերը:

Գլուխ 2.

Հաջողակ քրիստոնյա դառնալու հինգ քայլեր

Որոշ մարդիկ կարծում են, որ հաջողակ քրիստոնյա դառնալը հեշտ է: Նրանք մտածում են, որ երբ խոստովանես մեղքերդ, Աստված ինքնաբերաբար կհեռացնի քո բոլոր խնդիրներն ու դժվարությունները և քեզ կտա ուրախություն, խաղաղություն, փող: Սակայն Աստված այդպես չի գործում: Եթե դու ուզում ես հաջողակ քրիստոնյա դառնալ, պետք է գործես Սուրբ Հոգու հետ միասին՝ քո կյանքում փոփոխություններ բերելու համար:

Սուրբ Հոգին կառաջնորդի քեզ քո առօրյա կյանքում և հնարավորություններ կտա հոգևորապես աճելու: Դու մեկ կամ երկու շաբաթում հոգևորապես հասուն չես դառնում: Աստծո օգնությամբ դու կարող ես շարունակել աճել մինչև քո կյանքի վերջին օրը: Աստված հաջողությունն այլ կերպ է չափում, քան մարդիկ: Դու այսօր կարող ես հաջողակ լինել՝ անելով բաներ, որոնք Աստված ուզում է, որ դու այսօր անես: Հիշի՛ր, որ դու Նրա զավակն ես: Քանի որ Աստված քեզ հատուկ ծրագրով է ստեղծել, դու ավելի երջանիկ կլինես, եթե հետևես Նրա ծրագրին և շարունակես աճել:

Եթե ունես երեխա, ով մեկ կամ երկու տարեկան է, դու ակնկալում ես, որ քո երեխան իրեն երեխայի պես պետք է պահի: Դու չես բարկանում, երբ նա իրեն մեծի պես չի պահում: Սակայն երբ քո երեխան արդեն 21 տարեկան է, դու ակնկալում ես, որ նրա վարքը և խոսելաձևը պետք է հասունանան: Երբ Աստված նայում է քեզ, Նա արդար և ազնիվ չափանիշներ է օգտագործում: Նա գիտի քո ուժեղ և թույլ կողմերը և թե ինչքան աճ կարող է ակնկալել քեզնից: Եթե դու ուզում ես հաջողակ քրիստոնյա լինել, պետք է շարունակես աճել:

Հաջորդ էջերում դու կձանոթանաս հինգ քայլերին, որոնք քեզ կօգնեն հասուն քրիստոնյա դառնալ: Մենք կարող էինք շատ ավելի քայլեր գրել այս աճման ընթացքի վերաբերյալ: Սակայն այս հինգը հիմնականներն են, որոնց շուրջ մենք պետք է լրջորեն խորհենք, երբ փորձում ենք հաճեցնել Աստծուն:

Ա. Որո՞նք են այդ հինգ քայլերը

1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:
2. Փոխել մտածելակերպը:
3. Դնել նոր նպատակներ:
4. Սովորել ղեկավարել զգացմունքները:
5. Պատմել մարդկանց, թե ինչ է արել Քրիստոսը քո կյանքում:

Մանրամասն դիտարկենք այս քայլերից յուրաքանչյուրը:

Քայլ 1. Դառնալ ճշմարիտ քրիստոնյա:

Պարզ է, որ դու չես կարող «հաջողակ» քրիստոնյա դառնալ, քանի դեռ ճշմարիտ քրիստոնյա չես դարձել: Աստվածաշունչը մեզ հարց է տալիս, որպեսզի մեզ մտածել տա մեր կյանքի առաջնայնությունների մասին, «Քանի որ ի՞նչ օգուտ մարդուն, եթե ամբողջ աշխարհը շահի և իր անձը կորցնի: ³⁷Կամ, ի՞նչ փրկագին պիտի տա մարդ իր անձի համար» (Մարկոս 8:36-37): Երբ դու նայում ես այն ամենին, ինչ աշխարհն է քեզ առաջարկում, արդյո՞ք այն ավելի արժեքավոր է, քան Աստծո հետ հավիտյան ապրելը:

Ի՞նչ է նշանակում լինել ճշմարիտ քրիստոնյա: Ինչպե՞ս են քո հոգին, միտքը, զգացմունքներն ու կամքը մասնակցում քրիստոնյա դառնալու գործընթացին:

Ա. Թույլ տուր Աստծուն՝ խոսել քեզ հետ Աստվածաշնչի միջոցով:

Աստված մեզ տվել է Իր Խոսքը՝ Աստվածաշունչը, որը մեզ ասում է, թե ինչպես դառնալ ճշմարիտ քրիստոնյա: Աստվածաշունչ կարդալիս դու պարզ կտեսնես այն փաստերը, որոնք բացատրում են, թե ինչպես մարդ կարող է ճշմարիտ քրիստոնյա դառնալ: Սուրբ Հոգին կխոսի քեզ հետ քո խղճմտանքի միջոցով և ցույց կտա, թե ինչո՞ւ դու կարիք ունես ճշմարիտ քրիստոնյա դառնալու: Երբ դու քո կյանքը տալիս ես Քրիստոսին, Նա գալիս և բնակվում է քո հոգում: Նա կյանք է բերում քո հոգու մեջ: Տե՛ս Հռոմեացիներին 8:9-11:

Բ. Դու Նրա Խոսքը հասկանում ես մտքով:

Սուրբ Հոգին քեզ կօգնի հասկանալ Նրա Խոսքը: Նա կօգնի քեզ տեսնել, թե ինչպես կարող ես ճշմարիտ քրիստոնյա դառնալ: Նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը՝ դու պետք է հասկանաս, թե ինչպես է դա արվում: Հնարավոր չէ ինչ-որ

հնարքով քրիստոնյա դառնալ: Քո միտքը պետք է ակտիվորեն մասնակցի քրիստոնյա դառնալու ընթացքի մեջ:

Գ. Դու արձագանքում ես քո զգացմունքներով:

Քո զգացմունքները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն քրիստոնյա դառնալու գործընթացի մեջ: Ահա մի քանի զգացումներ, որոնք մարդ պետք է ունենա քրիստոնյա դառնալու ընթացքում:

*Տխրություն. քանի որ դու մեղք ես գործել Աստծո առաջ: Տե՛ս Հակոբոս 4:9:

*Ուրախություն. քանի որ քո մեղքերը ներվել են, և մեղավորության զգացողությունը վերացել է: Կարող ես ուրախ լինել, որովհետև հիմա դու Աստծո զավակ ես և հավիտենական կյանքի խոստում ունես: Տե՛ս Դուկաս 10:20:

*Խաղաղություն. քանի որ հիմա Հիսուսը քո կյանքի Առաջնորդն է: Տե՛ս 14:27:

Դ. Դու որոշում ես կայացնում քո կամքով:

Դու պետք է ավելին անես, քան քրիստոնյա դառնալու մասին մտածելն ու զգացմունքային ապրումներ ունենալը. պետք է որոշում կայացնես: Դու պետք է որոշում կայացնես, թե ինչպես ես վարվելու Աստծո հետ: Խոստովանելո՞ւ ես քո մեղքերն Աստծուն և խնդրելո՞ւ ես, որ ների քեզ: Թույլ տալո՞ւ ես Նրան, որ դառնա քո կյանքի Առաջնորդը: Եթե այս հարցերի պատասխանն «այո» է, ապա դու պետք է Աստծուն ասես քո որոշման մասին: Տե՛ս Հռոմեացիներին 10:9-10:

Երբ դու Հիսուսին խնդրում ես ներել քո մեղքերն ու դառնալ քո կյանքի Առաջնորդը, Նա անում է դա: Նա գալիս է քո հոգու մեջ և ապրում է այնտեղ: Տե՛ս Հռոմեացիներին 8:9-11: Քրիստոնյա դառնալու թեման մանրամասնորեն նկարագրված է *Խնդրային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի՝ *Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ* բաժնում:

Քայլ 2. Փոխել մտածելակերպը:

Որոշ մարդիկ կարծում են, որ հաջողակ քրիստոնյա դառնալու համար բավական է խոստովանել մեղքերն ու խնդրել, որ Հիսուսը դառնա իրենց կյանքի Առաջնորդը: Դա այնքան էլ այդպես չէ: Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, Աստված անմիջապես փոփոխություն է բերում քո հոգու մեջ: Նա գալիս է ապրելու քո հոգում: Առանց Աստծո ներկայության քո հոգին մնում է մեռած վիճակում:

Սակայն Աստված անմիջապես փոփոխության չի ենթարկում քո միտքը, զգացմունքներն ու կամքը: Դու պետք է ակտիվորեն ներգրավվես քո կյանքի այդ ասպարեզների փոփոխության մեջ, եթե ուզում ես հաջողակ քրիստոնյա դառնալ:

Աստված ասում է, որ Իր ճանապարհները տարբեր են մեր ճանապարհներից, և Իր մտքերը տարբեր են մեր մտքերից (Եսայի 55:8): Դու պետք է սովորես մտածել այնպես, ինչպես Աստված է մտածում: Փիլիպպեցիների 4:8-ը մի օրինակ է տալիս, թե ինչպես է Աստված ուզում, որ դու մտածես:

Փիլիպպեցիներին 4:8.

«Վերջապես, եղբայրներ՝ ը, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ հարգանքի արժանի է, ինչ որ արդար է, ինչ որ մաքուր է, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բարի համբավ ունի, ինչ առաքինություն և ինչ գովելի բան որ կա, դրանց մասին մտածեցե՛ք»:

Երբ դու ուսումնասիրես Աստվածաշունչն ու կիրառես այն ամենը, ինչ սովորում ես, Սուրբ Հոգին քեզ կօգնի հասկանալ, թե ինչպես է Աստված մտածում: Նա կօգնի քեզ փոխել քո վերաբերմունքները: Հռոմեացիներին 12:2-ը կոչ է անում լրիվ նոր մտածելակերպ սովորել:

Հռոմեացիներին 12:2.

«Եվ մի կերպավորվե՛ք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ քննե՛ք, թե ո՞րն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին ու կատարյալը»:

Ա. Ի՞նչ է վերաբերմունքը:

Վերաբերմունքը զգացմունք չէ: Զգացմունքը կամ զգացողությունը նույնը չեն, ինչ՝ մտքերը: Նախապաշարումը վերաբերմունք է: Դա այն է, ինչ դու մտածում ես կոնկրետ բանի մասին: Մարդը կարող է նախապաշարման հետ միասին ուժեղ զգացողություններ ունենալ, օրինակ՝ բարկություն, ատելություն կամ վախ:

«Վերաբերմունք» բառը կարելի է սահմանել հետևյալ կերպ.

- (1) Մտածելակերպ,
- (2) մտածելու սովորություն,
- (3) հստակ կարծիք,
- (4) տեսակետ,
- (5) մոտեցում:

Վերաբերմունքները ձևավորվում են մտքում և այնքան խորն են դառնում քո կյանքի մի մասը, որ դու անգամ չես գիտակցում դրանց մասին, երբ օգտագործում ես: Քո վերաբերմունքները երևում են այն բանում, թե ինչպես ես արձագանքում քո առօրյա կյանքում: Այն, ինչ դու ասում ես և անում, և այն զգացմունքները, որ դու արտահայտում ես, բացահայտում են քո վերաբերմունքները:

Ինչպե՞ս ես դու արձագանքում, երբ դիմացից ընթացող ավտոմեքենայի վարորդը կանաչ լույսի տակ առաջ չի գնում: Ինչպե՞ս ես դու արձագանքում, երբ

ինչ-որ մեկը հայտնում է քեզ կամ վատ անուններ կպցնում: Քո արձագանքները բացահայտում են քո վերաբերմունքները՝ քո մտածելակերպը որևէ իրավիճակի հանդեպ:

Բ. Ինչպե՞ս կարող եմ նոր վերաբերմունքներ զարգացնել:

Նոր վերաբերմունքներ զարգացնելու գործընթացը երբեմն դանդաղ է և ցավեցնող: Դու, հնարավոր է, ցանկանաս դադարեցնել բարկանալու քո արագ արձագանքը, երբ ինչ-որ մեկը բարկանում է քեզ վրա: Դա ավելին է, քան ընդամենը ուղղվելու խոստումը: Այդ վերաբերմունքները տարիներ շարունակ եղել են քո մտածելակերպի մի մասը: Հազվադեպ է լինում, որ Աստված միանգամից գլխիվայր փոխի մարդու վերաբերմունքները: Սովորաբար Նա ակնթարթային հրաշքներ չի անում մարդու կյանքի այս ասպարեզում: Սակայն կարող ես վստահ լինել, որ Նա միշտ պատրաստ է օգնել քեզ՝ փոխել քո վերաբերմունքները, եթե դու պատրաստակամ ես գործել Նրա հետ միասին:

Լավագույն միջոցներից մեկը՝ իմանալու, թե ինչ նոր վերաբերմունքներ է Աստված ցանկանում, որ դու ունենաս, Աստվածաշունչ կարդալն է: Իմացի՛ր, թե ինչպես էր Հիսուսն ամեն օր արձագանքում տարբեր մարդկանց, որոնց Նա հանդիպում էր և աշխատանք տանում նրանց հետ: Աստվածաշնչում փնտրի՛ր համարներ, որոնք խոսում են կյանքիդ այն ասպարեզների մասին, որտեղ դու կարիք ունես փոխելու քո մտածելակերպը: Առակաց գիրքը լավ միջոց է, որպեսզի իմանաս, թե ինչ է Աստված մտածում քո կյանքում հանդիպած բազմաթիվ ու բազմապիսի հարցերի վերաբերյալ: Փիլիպպեցիներին 2:5-ը քաջալերում է մեզ՝ ունենալ նույն վերաբերմունքները, որ Հիսուսն ուներ: Եթե դու վստահ չես, որ քո վերաբերմունքներն Աստծուն հաճելի են, ապա հարցրո՛ւ Նրան. «Աստվա՛ծ իմ, ի՞նչ ես Դու մտածում այս մասին»: Փնտրի՛ր Նրա պատասխանները, երբ Աստվածաշունչ ես կարդում, և խոսի՛ր մյուս քրիստոնյաների հետ:

Պարզապես Աստվածաշունչ կարդալը, հնարավոր է, բավարար չլինի քո մտածելակերպը փոխելու համար: Սուրբ Գրքից համարներ անգիր անելը քեզ օգնելու հզոր միջոց է, որպեսզի նոր վերաբերմունքներ զարգացնես քո կենսակերպի մեջ: Ղուկաս 6:27-38-ը լի է գործնական խորհուրդներով: Սուրբ Գրքից համարներ անգիր անելիս ասա՛ ինքդ քեզ, որ ուզում ես այդ ձևով մտածել:

Հիշի՛ր, որ մտքիդ մեջ նոր վերաբերմունքներ կառուցելը, հնարավոր է, այնքան էլ չհաջողվի, եթե դու ապավինես միայն քո կամքի ուժին: Խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որպեսզի օգնի քեզ՝ քո կյանքի բոլոր իրավիճակներում աստվածաշնչյան այս վերաբերմունքները գործի դնելու համար: Տե՛ս Հովհաննես 16:13-ը: Վերաբերմունքների թեման մանրամասնորեն ներկայացված է *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի՝ *Վերաբերմունքներ* բաժնում:

Քայլ 3. Դնել նոր նպատակներ:

Հաջողակ քրիստոնյա լինելն ավելին է, քան պարզապես Աստծո Խոսքը հասկանալը: Դու պետք է այն կիրառես քո կյանքում: Դու պետք է քո կամքն ու ցանկությունները դնես Աստծո առաջնորդության ներքո և անես այն բաները, ինչ Նա է ուզում, որ դու անես: «Մարդու սիրտն է ծրագրում իր ճամփան, բայց Տերն ուղղում է նրա քայլերը» (Առակաց 16:9): Այնպիսի նպատակներ դիր, որոնք կհամապատասխանեն Աստծո ծրագրերին ու նպատակներին: «Ուրեմն, ի՞նչ է ցանկանում Աստված, որ ես անեմ», - կհարցնես դու:

Ա. Իմացի՛ր, թե ինչ է Աստված ուզում, որ դու անես:

Առաջին և ամենակարևոր քայլը նպատակներ դնելու հարցում այն է, որ բացահայտես, թե որոնք են Աստծո նպատակները քեզ համար:

Եփեսացիներին 2:10.

«Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոսով Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք»:

Երեմիա 29:11.

«Քանի որ Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին, - ասում է Տերը, - խաղաղությամբ և խորհուրդներ և ո՛չ թե չարիքի, որ ձեզ ապագա ու հույս տամ»:

Այս երկու համարներն էլ շատ պարզ ցույց են տալիս, որ Աստված արդեն ունի ծրագրեր՝ պատրաստած այն բանի համար, ինչ Նա ուզում է, որ դու անես: Դու կամ կարող ես գրկաբաց ընդունել Աստծո նպատակները կամ անտեսել դրանք: Եթե գրկաբաց ընդունես, դրանք քեզ գործություն կտան՝ քո օրերն իմաստալից դարձնելու համար: Այս նպատակները կարող են քեզ օգնել, որպեսզի կենտրոնանաս քո եսասիրական կարիքներից ու ցանկություններից այն կողմ:

Դու ունես ապագա, որ Աստված նախապատրաստել է քո կյանքի համար: Կարևոր չէ՝ մարդիկ ինչ են ասել քեզ. քո կյանքը կարևոր է Աստծո համար: Նպատակ կա քո՝ այստեղ լինելու մեջ: Դու պետք է հայտնաբերես դա և աշխատես անել այն, ինչ Աստված է ուզում, որ անես:

Այսպիսով, ի՞նչ է Աստված ուզում, որ անես այսօր: Նայի՛ր քո շուրջը, ի՞նչ կարիքներ ես տեսնում: Կարո՞ղ ես մասնակցել այդ կարիքների բավարարման գործում: Քո շրջապատում շատ կան մարդիկ, որոնք կարիք ունեն ժպիտի, քաջալերանքի, աղոթքի: Մենք չենք խոսում ընդամենը մեծ որոշումների մասին, թե ո՞ւմ հետ ես ամուսնանալու, կամ ի՞նչ աշխատանքային մասնագիտություն ես ընտրելու: Նայի՛ր կյանքի առօրյա փոքր բաներին նույնպես, որոնց հանդիպում ես այսօր:

Ուսումնասիրի՛ր Աստվածաշունչը՝ իմանալու, թե ինչ է Աստված ուզում, որ անես: Աստվածաշնչում շատ կան համարներ, որոնք վերաբերում են իրավիճակներին, որոնց դու հանդիպում ես ամեն օր: Օգտագործի՛ր համարաբառ, կամ Աստվածաշնչի համակարգչային տարբերակ, որպեսզի գտնես որևէ կոնկրետ թեմային վերաբերող բոլոր համարները:

Օրինակ, դու շատ համարներ կգտնես, որոնք ցույց են տալիս, թե ի՛նչ է Աստված ուզում, որ անես, երբ աշխատանքի մեջ ես: Կան համարներ, որոնք վերաբերում են քո խոսելաձևին և զգացմունքներին, դրանք են բարկությունը, դառնությունը, ուրախությունը և խաղաղությունը: Աստվածաշնչյան այս համարներում Աստված քեզ ասում է, թե ինչպես է Նա ցանկանում, որ դու ապրես և արձագանքես յուրաքանչյուր իրավիճակի:

Միգուցե դու ասես. «Դե լավ, երբ հաջորդ տարի ես բավականաչափ ուժեղ լինեմ, կսկսեմ նպատակներ դնել»: Սկսիր հիմա՛ : Մի՛ սպասիր կատարյալ պայմանների: Աստվածաշունչն ասում է. «Քամուն դիտողը չի ցանի, և ամպերին նայողը չի հնձի» (Ժողովող 11:4): Ահա մի քանի աստվածաշնչյան համարներ, որոնք նկարագրում են այն բաները, որոնք Աստված ուզում է, որ անես.

Մարկոս 12:30-31

Ղուկաս 6:27-38

Հռոմեացիներին 13:1-5

Ա Կորնթացիներին 13:4-8

Եփեսացիներին 6:1

Բ Պետրոս 1:5-11

Բ. Տարբեր տեսակի նպատակներ:

Կան տարբեր տեսակի նպատակներ, որ քրիստոնյան կարող է դնել իր առջև: Ահա մի քանի տարբեր ասպարեզներ, որտեղ դու կարող ես նպատակներ դնել.

1. Ուսումնական ծրագրեր
2. Աշխատանքային նպատակներ
3. Հոգևոր նպատակներ
4. Աստվածաշնչի ընթերցանություն և համարներ անգիր անել
5. Բնավորության հետ կապված նպատակներ (անձի բնավորության որոշակի գծերի զարգացում. քաջություն, համբերություն, սիրո դրսևորում, բարություն)
6. Վերաբերմունքի հետ կապված նպատակներ
7. Աստծո Խոսքը կիրառելու նպատակներ
8. Փոխհարաբերության հետ կապված նպատակներ
9. Չափավորության նպատակներ

Գ. Ինչպե՞ս կարող եմ սկսել նպատակներ դնել:

Կան տարբեր նպատակներ, որոնք կարող ես դնել քո առջև, որոնք քեզ կօգնեն հաջողակ քրիստոնյա դառնալ: Բայց և այնպես, կա նպատակներ դնելու մի տեսակ, որը կարող է հզոր ազդեցություն ունենալ Աստծո և մարդկանց հետ քո փոխհարաբերությունների վրա: Դու պետք է սովորես, թե ինչպես *ամենօրյա անձնական կիրառման նպատակներ* դնես: Դրանք փոքր նպատակներ են, որոնց դու կարող ես հասնել մեկ կամ երկու օրվա ընթացքում: Այս ամենօրյա նպատակները գործնական դարձնելու ձևերից մեկը դրանք աստվածաշնչյան համարների վրա հիմնելն է:

Երբ դու Աստվածաշնչում գտնում ես համար, որը վերաբերում է քեզ հանդիպած խնդրին կամ հարցին, գրի՛ր մի նպատակ, որը կօգնի քեզ գործնականում կիրառել այն, ինչ այդ համարն է սովորեցնում քեզ անել: Ահա մանրամասն նկարագրություն, թե ինչպես կարելի է դա անել:

1. Նայի՛ր քո կյանքի առօրյա խնդիրներին:

Հնարավոր է՝ այսօր հանդիպել ես տարբեր դժվար իրավիճակների: Դու քեզ ճնշված ես զգում: Եվ չգիտես, թե ինչ է Աստված ուզում, որ անես: Նայի՛ր այդ խնդիրներին և փորձի՛ր գտնել դրանց առաջացման պատճառները:

2. Ինքդ քեզ հարցրո՛ւ. «Ի՞նչ է Աստված փորձում այսօր ինձ սովորեցնել իմ կյանքի այս ասպարեզում»:

Աղոթի՛ր և խնդրի՛ր, որ Աստված օգնի քեզ՝ հասկանալու, թե որոնք են այդ խնդրի պատճառները: Խնդրի՛ր Նրան օգնել քեզ՝ տեսնելու քո կյանքի այն ասպարեզները, որտեղ դու կարիք ունես աճելու՝ այդ խնդիրը հաղթահարելու նպատակով:

3. Գտի՛ր քո կյանքում մի ասպարեզ, որտեղ դու ուզում ես աճել:

Նպատակները կարող են քեզ օգնել՝ դուրս գալ քո հարմարավետության տարածքից: Դրանք կարող են նաև քեզ օգնել, որպեսզի դու ավելին անես, քան անում ես այսօր: Պատրաստակա՛մ եղիր համարձակ քայլ անելու: Եթե դու միայնակ ես, նպատակ դիր: Արա՛ մի բան, որ քեզ շփման մեջ կմտցնի մարդկանց հետ: Գտի՛ր կարիքավոր մարդկանց և դարձի՛ր նրանց ընկերը: Եթե դժվարանաս հայտնաբերել, թե որ ասպարեզում դու կարիք ունես աճելու, նայի՛ր այն ցանկը, որ տրված է Ա Կորնթացիներին 12:4-8:

4. Աստվածաշնչյան քո ուսումնասիրությունը կապի՛ր այն ասպարեզի հետ, որտեղ դու ուզում ես աճել:

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը քո կյանքի տվյալ ասպարեզի մասին: Աստվածաշնչում փնտրի՛ր այն համարները, որոնք քեզ կօգնեն հասկանալ տվյալ

խնդիրը և Աստծո խորհուրդը՝ դրա լուծման համար: Փնտրի՛ր խոստումներ և ճշմարտություններ, որոնք կարող ես կիրառել քո առօրյա կյանքում:

5. Գրի՛ր այն անելիքները, որոնք կարող ես ավարտին հասցնել այսօր:

Հիմա, երբ դու ուսումնասիրել ես Աստվածաշունչը, գրի՛ր անձնական կիրառման մի քանի հնարավոր նպատակներ: Սկզբում ժամանակ հատկացրու որոշակի ստեղծագործական մտածողության համար: Գրի՛ր ցանկացած միտք, որ հնարավոր է՝ նպատակ դառնա: Ապա ընտրի՛ր մեկ նպատակ այսօրվա համար: Ամենօրյա լավ նպատակներ դնելու համար օգտագործի՛ր ուղեցույցը, որին այս բաժնում կհանդիպես մի փոքր ավելի ուշ: Ինչքան հնարավոր է՝ հստակություն մտցրու, որպեսզի դու և մյուսները կարողանաք ստուգել արդյունքները:

Հաջորդը. գործի՛ դիր քո ծրագրերը: Արա՛ այն, ինչ ծրագրավորել ես:

6. Գնահատի՛ր արդյունքները:

Նույն օրը՝ ավելի ուշ, կամ հաջորդ օրը ի մի՛ բեր, թե ինչ տեղի ունեցավ, երբ փորձեցիր հասնել քո դրած նպատակին: Երբեմն ի վիճակի չես լինի հասնել նպատակիդ: Բայց մի՛ հուսահատվիր: Նորի՛ց փորձիր: Մի՛ վախեցիր փոխել քո նպատակները: Բայց, մյուս կողմից էլ, մի՛ փոխիր քո նպատակները պարզապես այն պատճառով, որ առաջին անգամ չկարողացար այն իրականացնել:

Թոմաս Էդիսոնը, նախքան կկարողանար հայտնագործել էլեկտրական լամպը, շատ անգամներ ձախողվեց, մինչև որ վերջապես լամպն աշխատեց: Իրականում նա ավելի քան 2.000 անգամ անհաջողության մատնվեց, մինչև մեկ անգամ հաջողվեց. հայտնագործեց էլեկտրական լամպը: Գործը կիսատ թողնող մի՛ եղիր:

Բ Կորնթացիներին 8:11.

«Արդ, ավարտին հասցրեք սա, որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք, այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:

Երբ կրկին անդրադառնաս վերևում նշված վեց մտքերին, ուշադրություն դարձրու առաջինին: «Նայի՛ր քո կյանքի առօրյա խնդիրներին»: Մեզնից շատերը բախումներ չեն սիրում: Բայց եթե ուզում ես հաջողակ քրիստոնյա լինել, ուրեմն պետք է սովորես դիմակայել կոնֆլիկտներին ու աճես այդ ցավալի փորձությունների միջոցով: Դու պետք է պատրաստակամ լինես օգնելու՝ լուծել խնդիրները: Հեշտ է ինչ-որ մեկին նվաստացնել և մտածել. «Ես ճիշտ եմ, դու սխալ ես»: Սակայն Աստված մարդկանց է փնտրում, ովքեր ուզում են խաղաղարար լինել:

Աստված չի ակնկալում, որ դու միշտ ճիշտ լինես. դա կատարելություն է: Բայց Նա իրոք ակնկալում է, որ անկեղծ լինես: Երբ դու սխալ ես, ընդունի՛ր դա: Աստված, միևնույն է, կշարունակի քեզ սիրել: Նա քեզ կօգնի սովորել տվյալ

փորձությունից, եթե դու ցանկանաս գալ Նրա մոտ՝ սովորելու պատրաստ բաց արտով և մտքով: Տե՛ս Հռոմեացիներին 5:3-5:

Յուրաքանչյուր օր սկսի՛ր մի պարզ աղոթքով. «Աստվա՛ճ իմ, ի՞նչ ես ուզում, որ ես անեմ այսօր»: Փնտրի՛ր Աստծո հնարավորությունները, որոնք Նա այսօր դնում է քո կյանքում, և փնտրի՛ր այն բաները, որոնք անելու համար է Նա ստեղծել քեզ:

Դ. Որո՞նք են ամենօրյա լավ նպատակների նշանները:

Հաճախ սկզբում դժվար է լինում սովորել, թե ինչպես դնել ամենօրյա լավ նպատակներ: Մեզնից շատերը նախկինում դա երբեք չեն արել: Ցանկացած նոր հմտություն կատարյալ է դառնում կիրառելով: Ինչքան հաճախ ես նպատակներ դնում, այնքան ավելի լավ ես հասնում դրանց, և այնքան ավելի օգտակար կարող եմ դրանք լինել քո քրիստոնեական աճի համար: Ահա մի քանի ուղեցույցներ, որոնք կօգնեն քեզ՝ սովորելու, թե ինչպես բարելավել ամենօրյա նպատակները:

- 1. Այն պարզ է:** Նպատակը մեկ բան պետք է ասի: Այն չպետք է քո մտքում կասկած թողնի, թե ինչ ես ցանկանում իրականացնել:
- 2. Այն կոնկրետ է:** Նպատակը պետք է հստակորեն ցույց տա վերջնակետը: Հաճախ մեր նպատակները շատ ընդհանրական են: Դիտարկենք հետևյալը. «Ես ավելի կմոտենամ Աստծուն»: Այս նպատակը շատ ընդհանրական է: Ինչպե՞ս ես դու մոտենալու Աստծուն: Ճիշտ կլինե՞ր որոշել մեկ հստակ բան, որը դու կարող էիր անել, և որը հաստատ քեզ ավելի կմոտեցնե՞ր Աստծուն: Դի՛ր այն՝ որպես քո առաջին նպատակ: Երբ հասնես դրան, դի՛ր մեկ այլ նպատակ, որը դրական կազդի առաջինի վրա, ինչպես նաև քեզ մեկ քայլ առաջ կտանի Աստծո հետ քո հաղորդակցության մեջ: Մի՛շտ եղի՛ր կոնկրետ և հստակ՝ յուրաքանչյուր նպատակը որոշելիս: Մի՛ բարդացրու այն և սահմանափակի՛ր միայն մեկ գործողությամբ:
- 3. Այն իմաստալից է:** Նպատակը կապված է քո ներկա կյանքի հետ: Նպատակը՝ «Եթե ես հարստանամ, ամեն կիրակի իմ եկեղեցուն 50 դոլար կտամ», այնքան էլ իմաստալից չէ, եթե դու հարուստ չես: Երբ կհարստանաս, այդ ժամանակ կարող ես հարստության հետ կապված նպատակներ դնել: Քո նպատակը պետք է աճի՝ կախված հնարավորություններից, որ այսօր դու ունես քո կյանքում: Այն նաև պետք է տանի փոփոխության, որը դու իրոք կցանկանայիր իրականացած տեսնել քո կյանքում:
- 4. Այն գործնական է:** Կարո՞ղ ես դու տվյալ նպատակն այսօր ավարտին հասցնել: Այս նպատակը՝ «Ամեն անգամ, երբ ես փորձության մեջ եմ, կհասկանամ, որ սատանան է ինձ փորձում», լավն է թվում, բայց արդյո՞ք այն գործնական է: Ինչպե՞ս ես հիշելու, որ «ամեն անգամ երբ փորձության մեջ լինես», ինքդ քեզ ասես, որ տվյալ փորձությունը սատանայից է: Այս նպատակը հոգևոր է թվում, սակայն փորձություններ հաղթահարելու առաջին փորձի ժամանակ կարող է չափից ավելի մեծ լինել նորադարձ քրիստոնյայի համար:

Սկսի՛ր պարզ, կարճ ժամանակ պահանջող նպատակներից, որոնք, համոզված ես, որ կարող ես ավարտին հասցնել մեկ օրում: Որպես նպատակ վերցրո՛ւ այս օրինակը. «Այսօր ես կնշեմ յուրաքանչյուր դեպքը, երբ մեղքի փորձության մեջ լինեմ»: Դու կարող ես այս նպատակն ավելի կոնկրետ դարձնել՝ նշելով փորձության միայն մի տեսակ, օրինակ. «Այսօր ես կնշեմ յուրաքանչյուր դեպքը, երբ հայիոյելու փորձության մեջ լինեմ»:

- 5. Այն չափելի է:** Ինչպե՞ս կարող ես չափել հետևյալ նպատակը. «Ես այսօր ավելի կմոտենամ Աստծուն»: Դա հեշտ չէ չափել: Եթե ուզում ես վստահ լինել, որ առաջընթաց ունես, անհրաժեշտ է նպատակն այնպես գրել, որ կարողանաս հեշտությամբ չափել քո առաջընթացը: Իսկ այս նպատակը հնարավոր է չափել. «Այսօր ես կնշեմ յուրաքանչյուր դեպքը, երբ մեղք գործելու փորձության մեջ լինեմ»:

Դժվար է գրել նպատակներ, որոնք կարելի է հեշտությամբ չափել: Սակայն դա կարևոր է՝ առաջընթաց ունենալում վստահ լինելու համար: Ահա չորս հարցեր, որոնք կարող ես տալ ինքդ քեզ, երբ գրում ես քո նպատակները.

Ի՞նչը պետք է չափվի:

Ի՞նչ **միջոց** պետք է օգտագործեմ այն չափելու համար:

Այն **հեշտ** չափելի՞ է:

Ինչպե՞ս կարող է մեկ ուրիշը չափել իմ առաջընթացը:

Գործնական է և չափելի հետևյալ նպատակը. «Այս երեկո ես կգրեմ երեք փորձություններ, որ ունեցել եմ այսօր»: «Ես Գոհարիկին կխնդրեմ, որ ների ինձ՝ երեկ իր վրա բարկանալու համար»:

- 6. Այն օգնում է ինձ:** Անձնական կիրառման նպատակներ դնելու ողջ նպատակը քեզ օգնելն է, որպեսզի ավելի մոտենաս Աստծուն: Նախօրոք մտածի՛ր: Նպատակների գրելիս ինքդ քեզ հարցրո՛ւ. «Ինչպե՞ս է այս նպատակն ինձ օգնելու, որ աճեմ»: Յուրաքանչյուր նպատակ իրականացնելիս կարողանու՞մ ես տեսնել, թե ինչպես է այն օգնում քեզ ավելի լավ քրիստոնյա դառնալ:

Այս վեց ուղեցույցները չեն երաշխավորում, որ դու հաջողություն կունենաս: Անձնական կիրառման լավ նպատակներ գրելն ինքնաբերաբար քեզ հաջողակ քրիստոնյա չի դարձնում: Իրականում նպատակներն ընդամենը միջոցներ են, որպեսզի օգնեն քեզ, որ աճես: Աստված ամենաշատը հետաքրքրված է քո աճով, ոչ թե նրանով, թե արդյոք «լավ նպատակներ գրե՞լ ես»: Բայց, այնուամենայնիվ, եթե դու սովորես լավ նպատակներ գրել և հավատարմորեն իրականացնես դրանք, Աստված քեզ կօգնի աճել և դառնալ այնպիսի անձնավորություն, ինչպիսին Նա ուզում է, որ դու լինես: Աստված քեզնից կատարելություն չի ակնկալում, սակայն Նա իրոք ուզում է, որ Նրա ուսուցումները գործի դնես քո կյանքի մեջ:

Ինչպիսի՞ն էս քեզ պատկերացնում, երբ նայում էս ապագային: Ինչպիսի՞ անձնավորություն էս ուզում լինել երկու, հինգ, տասը տարի անց: Աստված վարձատրում է այն քրիստոնյային, ով որոշում է կայացնում հավատարիմ լինել Նրան: Կարո՞ղ էս ինքդ քեզ պատկերացնել տասը տարի անց՝ որպես մեկի, ով հավատարիմ է ապրել Քրիստոսին: Կարո՞ղ էս ինքդ քեզ պատկերացնել որպես մեկին, ում համար բարձրագույն կարևորությունը, առաջնայնությունը Աստվածաշնչի օրենքներին և ուսուցումներին հնազանդվելն է:

Մեկ այլ մարտահրավեր, որ դու կունենաս քո ողջ կյանքի ընթացքում՝ կայունության ձևավորումն է: Դու այն մարդկանցի՞ց էս, ովքեր այսօր պատրաստ են մարտահրավեր նետել «Գողիաթին», սակայն վաղը վախենում են սեփական ստվերից: Դու մի օր հայտնվո՞ւմ էս աշխարհի բարձունքում, իսկ հաջորդ օրը՝ հուսահատության ու ընկճվածության ձորում: Աստված կարող է քեզ օգնել՝ կայունություն ձեռք բերել քո կյանքում: Դու կշարունակես լավ օրեր ու վատ օրեր ունենալ: Մակայն անցնելով այդ ամենի միջով, կարող էս սովորել վստահել Հիսուսին և չխորտակվել քո կյանքում հանդիպող խնդիրների տակ: Ոչ մի հրաշագործ դեղ չկա նրանց համար, ովքեր իրենց կյանքում կայունություն են ուզում ունենալ: Դրա համար պետք է տքնաջան աշխատել և հայացքը հառել Հիսուսին ու Նրա ուսուցումներին:

Քայլ 4. Սովորել դեկավարել զգացմունքները:

Դու քրիստոնյա էս ոչ թե այն բանի համար, որ քեզ «փրկված» էս զգում, կամ որևէ այլ զգացողություն ունես, թեև դրանք շատ կարևոր մաս են կազմում քո առօրյա կյանքում, այլ որ Աստված է դրանք տվել քեզ, և հիմա պետք է սովորես, թե ինչպես օգտագործես քո զգացմունքները, որպեսզի կյանքդ հաճելի լինի քեզ և Աստծուն: Աստված տարբեր զգացմունքների վերաբերյալ բավականին շատ ասելիք ունի Աստվածաշնչում: Դու պետք է բացահայտես, թե ինչպես կարող են քո զգացմունքները քեզ օգնել՝ ավելի հաջողակ քրիստոնյա լինելու:

Կյանքիդ այս ասպարեզում աճելու հիմնական քայլերից մեկը քո զգացմունքների հետ ճիշտ վարվելն է: Սովորի՛ր զանազանել, թե ինչպես և երբ էս տարբեր զգացմունքներ արտահայտում: Ընդունի՛ր դրանք և սովորի՛ր արտահայտել ըստ պատշաճի: Թույլ մի՛ տուր, որ զգացմունքները կառավարեն քո ամբողջ կյանքը: Այն, ինչ դու զգում էս, չպետք է լինի գլխավոր գործոնը որոշումներ կայացնելու մեջ:

Որոշ մարդիկ գտնվում են «զգացմունքային վերելքների ու վայրէջքների» մեջ: Նրանք շատ զգացմունքային են և շատ արագ են արտահայտում իրենց հույզերը: Մի օր (կամ մի պահ) նրանք կարող են ոգևորվել ու ուրախությունից եռալ: Հաջորդ օրը (կամ պահին) կարող են հայտնվել հուսահատության անդունդում. նրանց ողջ ներաշխարհը կարծես գտնվում է մոայլության կախարդանքի ներքո: Իսկ այլ կարգի մարդիկ էլ ապրում են «զգացմունքային սառնամանիքի» մեջ: Նրանք երբևէ ազատ չեն արտահայտում իրենց զգացմունքները: Նրանց կարծրացած սառը արտահայտությունները ոչ մի ջերմություն կամ զգացմունք ցույց չեն տալիս:

Աստված ուզում է, որ դու վայելես Նրա հետ ապրելու ուրախությունը: Նա կարող է քեզ օգնել, որ ստեղծագործական մոտեցումներ գտնես քո զգացմունքներն արտահայտելու համար: Դու կարող ես վայելել Նրա շնորհած փրկության ուրախությունը: Դու կարող ես ուսումնասիրել Նոր Կտակարանը՝ տեսնելու համար, թե ինչպես էր Հիսուս Քրիստոսը տարբեր զգացմունքներ արտահայտում: Աստված ուզում է, որ դու աճես, որպեսզի կառավարես քո զգացմունքները և արտահայտես դրանք այնպես, որ մարդիկ տեսնեն, որ Նա է քո կյանքի Առաջնորդը:

Զգացմունքները կառավարել՝ չի նշանակում պարզապես դրանք զսպել: Միգուցե ավելի ճիշտ կլիներ ասել, որ դու կարիք ունես սովորելու, թե ինչպես ճիշտ կառավարես զգացմունքներդ: Աստված ուզում է, որ դու զգացմունքներ ունեցող մարդ լինես: Մակայն կարևորը սովորելն է, թե ինչպես արտահայտել զգացմունքներդ՝ Աստծուն փառք բերելու համար:

Ա. Դու սովորում ես կառավարել քո զգացմունքները՝ Սուրբ Գրքի հիման վրա վերաբերմունքներ զարգացնելով:

Քայլ 2-ում՝ «Փոխել մտածելակերպը», մենք քննարկեցինք վերաբերմունքների և զգացմունքների (զգացողությունների) միջև եղած տարբերությունները: Որևէ անձնավորության կամ իրավիճակի հանդեպ մեր վերաբերմունքն է որոշում, թե ինչպես մենք կարձագանքենք մեր զգացմունքներով: Մեծ մասամբ քո զգացմունքները որոշակի իրավիճակի հանդեպ քո վերաբերմունքի հետևանքներն են:

Եթե դու ուզում ես փոխել քո մտածելակերպը, ապա սկզբում պետք է նոր վերաբերմունքներ զարգացնես Աստվածաշնչի հիման վրա: Մարկոս 3:1-8-ն ասում է, որ մի անգամ Հիսուսը բարկացավ: Ինչպիսի՞ մտքեր էին անցնում Հիսուսի գլխով, երբ Նա բարկացել էր: Ինչպե՞ս Նա արտահայտեց Իր բարկությունը: Այդ հարցերի պատասխանները կբացահայտեն Նրա վերաբերմունքը տվյալ իրավիճակի հանդեպ:

Բ. Երբ դու «սխալ զգացմունքներ» ունես, դատարկի՛ր դրանք Աստծո առաջ՝ աղոթքի մեջ:

Զգացմունքները ոչ լավն են, ոչ էլ՝ վատը: Դրանք «չեզոք» են: Աստված մեզ այնպես է ստեղծել, որ զգացմունքների լայն շրջան ունենանք: Ուրեմն, ի՞նչ է նշանակում «սխալ զգացմունքներ»: Երբ զգացմունքը արտահայտվում է սխալ ժամանակ կամ սխալ ձևով, դա «սխալ զգացմունք» է: Օրինակ, Արսենի սենյակակալիցը հենց նոր իմացավ, որ իր ծնողներին սպանել են: Եթե Արսենը ծիծաղի պոռթկում ունենա, դա ուրախության զգացողություն արտահայտելու սխալ ժամանակ և վայր կլինի:

Ի՞նչ պետք է անես դու, երբ որևէ զգացմունք արտահայտում ես սխալ ժամանակ: Սովորություն մի՛ դարձրու՝ փորձելով զսպել այն կամ պահել ներսում: Սովորի՛ր այդ զգացմունքները դատարկել Աստծո առաջ՝ աղոթքի մեջ: Անկեղծորեն ասա՝ Աստծուն, թե ինչ ես զգում: Երբ դու Աստծո հետ խոսում ես քո զգացողությունների մասին, դա ժամանակավոր ազատագրում է բերում տվյալ զգացողությունից:

«Մխալ զգացմունքների» հիմնական կամ մշտակա լուծումների համար դու պետք է հետ գնաս դեպի քո վերաբերմունքները: Հնարավոր է՝ փոխես քո վերաբերմունքը՝ որևէ մեկի կամ որևէ հանգամանքի հանդեպ, որը պատճառ էր հանդիսանում քո՝ «սխալ զգացմունքով» արձագանքելուն:

Մենք բոլորս էլ մեր կյանքում ունենում ենք այնպիսի զգացմունքներ ու զգացողություններ, ինչպիսիք են՝ ատելությունը, բարկությունը կամ վախը: Գուցե արձագանքելու քո հին ձևը թույլ է տվել, որ այս զգացմունքներով ղեկավարվեն քո մտքերը, բառերն ու արարքները: Սակայն հիմա, երբ դու դարձել ես ճշմարիտ քրիստոնյա, հնարավոր է՝ ցանկանաս փոխվել և արձագանքելու նոր ձևեր զարգացնել: «Բայց ի՞նչ պետք է անեմ ես, երբ այդ «սխալ զգացմունքները» երևան գան»: Աստծո օգնությամբ դու կարող ես թույլ տալ Նրան՝ փոխարինել դրանք տվյալ իրավիճակի համար ավելի համապատասխան այլ զգացմունքներով: Օրինակ, հաճախ, երբ մենք բարկությամբ ենք արձագանքում, Աստված կարող է ցանկանալ հակառակը, որ տխրությամբ արձագանքենք:

Քո վերջնական նպատակը պետք է լինի զգացմունքային առումով այնպես արձագանքել, ինչպես Աստված կուզենար, որ արձագանքեիր: Մեկ այլ նպատակ է՝ սովորել զգալ այնպես, ինչպես Աստված է զգում տարբեր իրավիճակներում: Երբ դու Աստվածաշունչ ուսումնասիրես և աղոթես, Աստված քեզ կօգնի իմանալ, թե ինչ է Նա զգում քեզ հանդիպող իրավիճակների հանդեպ: Նա քեզ ուժ կտա, որ դու էլ նույն ձևով արձագանքես:

Աստվածաշունչն ուսուցանում է. պետք է լինես քո զգացմունքների տերը: Թույլ մի՛ տուր, որ խնդիրնե՛րը ղեկավարեն քո զգացմունքները:

Ժամանակ կպահանջվի, մինչև կսովորես կառավարել քո զգացմունքներն այնպես, ինչպես Աստված է ուզում: Որպես աճող քրիստոնյա՝ թույլ մի՛ տուր, որ քո բացասական զգացմունքները, կամ հոգևոր զգացմունքների պակասությունը սրտնեղություն բերի քո մեջ: Մերը, խաղաղությունը և ուրախությունը ամենակարևոր զգացմունքներն են, որ պետք է առկա լինեն քրիստոնյայի կյանքում: Գուցե այս երեքը միասին միշտ առկա չլինեն քո կյանքում, սակայն դրանք պետք է օր օրի ավելի ուժգին աճեն:

Գ. Սովորի՛ր զգայուն լինել այլոց զգացմունքների հանդեպ:

Հեշտ է եսասեր լինել և մտածել միայն ինքն իր մասին: Սակայն Հիսուսն ուզում է, որ մենք մտածենք նաև ուրիշների մասին և զգայուն լինենք նրանց զգացմունքների հանդեպ: Աստվածաշունչն ասում է. «Խոսքս ոչ թե ձեր, այլ ուրիշի խղճմտանքի մասին է, որովհետև ինչո՞ւ իմ ազատությունը դատվի ուրիշի խղճմտանքով» (Ա Կորնթացիներին 10:29):

Ինքդ քեզ հարցրո՛ւ. «Ի՞նչ զգացմունքներ ունի Աստված իմ և այլ մարդկանց հանդեպ, որոնց ես ամեն օր հանդիպում եմ: Փորձի՛ր զգայուն լինել Աստծո զգացմունքների հանդեպ: Աստվածաշունչը հստակ նշում է, որ Աստված պատրաստ է մեզ ներել, երբ մենք ձախողվում ենք: Մենք պետք է սովորենք ապրել «ամեն պահ ներել» վերաբերմունքով: Հնարավոր է՝ սատանան փորձում է քեզ, որպեսզի բարկանաս մարդկանց վրա, երբ նրանցից վիրավորվում ես: Այնպես որ, պատրա՛ստ եղիր ներել նրանց և ո՞չ չպահել նրանց հանդեպ:

Դու նաև պետք է պատրաստ լինես ընդունելու Աստծո ներումը, երբ սխալվում ես: Թույլ մի՛ տուր, որ հիասթափության զգացումները քեզ խանգարեն՝ սխալվելուց հետո մոտենալ Աստծուն: Աստված քեզ կօգնի աճել, եթե անգամ ինքդ քեզ ձախողակ զգաս: Աստծո խոստումը քեզ համար ճիշտ է. «Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ գորացնում է ինձ» (Փիլիպպեցիներին 4:13): Աստված քեզ կտա պետք եղած զգացմունքային ուժը՝ դեմ կանգնելու ցանկացած դժվարության, որ դու հանդիպում ես այսօր: Նա կարող է նաև քեզ տալ ուժ և զգայունակություն, որպեսզի տեսնես, թե ինչ են մյուս մարդիկ զգում տվյալ պարագայում:

Քայլ 5. Պատմել մարդկանց, թե ինչ է արել Քրիստոսը քո կյանքում:

Շատ կարևոր է՝ ընթացքի մեջ դնել հաջողակ քրիստոնյա դառնալու առաջին չորս քայլերը: Այդ չորս քայլերի վրա աշխատելիս դու կարող ես ցանկանալ՝ կիսվել մարդկանց հետ առ այն, թե ինչ է անում Քրիստոսը քո կյանքում:

Եթե դու ապրում ես հաջողակ քրիստոնեական կյանքով, մարդիկ կցանկանան իմանալ, թե ինչպես ես դա անում: Մա մի գերազանց հնարավորություն է քեզ համար՝ մատնացույց անելու Նրան՝ Սուրբ Հոգուն, Ով փաստորեն իրականացրել է այդ փոփոխությունը: Քո նոր նպատակներից մեկը պետք է լինի՝ պատմել մարդկանց, թե ինչ է անում Հիսուսը քո կյանքում: Ո՞րն է դա անելու լավագույն ձևը:

Ա. Սկզբում կիսվի՛ր քո սիրով:

Ա Կորնթացիներին 13:1-8-ը մեզ պատմում է, թե ինչքան կարևոր է ճշմարիտ սերը, և ինչպես մենք կարող ենք սեր ցույց տալ մարդկանց: Մրանք պարզ,

գործնական ձևեր են՝ մարդկանց հետ սեր հաղորդակցվելու համար (թեև դրանք այնքան էլ հեշտ չեն): Մերը մեր աշխարհի ամենահզոր ուժերից մեկն է: Քո սերը, առավել քան որևէ այլ բան, կհամոզի մեկ ուրիշին, որ քրիստոնյա լինելը լավ բան է:

Բ. Փնտրի՛ր նրանց, ովքեր, իրոք, կարիքի մեջ են:

Մարդիկ հաճախ ավելի բաց են նոր գաղափարների համար, երբ խնդիրներ են ունենում, որոնք չեն կարողանում լուծել: Այս իրավիճակում նրանք մեկ անգամ չէ, որ կհետաքրքրվեն, թե ինչպես կարող է Հիսուս Քրիստոսն օգնել իրենց նմանօրինակ խնդիրներ լուծելիս: Խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ քեզ առաջնորդի այն մարդկանց մոտ, ովքեր կարիքներ ունեն:

Գ. Փնտրի՛ր նրանց, ովքեր օգնության կարիք ունեն:

Շատ կան մարդիկ, ովքեր, իրոք, կարիքի մեջ են: Սակայն, իմացի՛ր, նրանցից ոչ բոլորն են օգնություն ուզում: Մի՛ ստիպիր մարդկանց՝ լսել քեզ: Եթե նրանք օգնության կարիք չունեն, ուրեմն շատ քիչ բան կա, որ կարող ես անել նրանց համար, բացի այն բանից, որ շարունակես սեր ցուցաբերել նրանց նկատմամբ: Թող Սուրբ Հոգին աշխատի նրանց հետ, որպեսզի փոխի նրանց վերաբերմունքը: Պատրա՛ստ եղիր օգնելու, երբ էլ որ նրանք դիմեն քեզ: Շատ կարևոր է սերը և այդ սիրով կիսվելը մարդկանց հետ այնպես, որ նրանք կարողանան տեսնել, որ Հիսուսն իրոք փոխում է նրանց կյանքը:

Դ. Մի՛ քարոզիր կամ մի՛ վիճարանիր:

Երբ դու մարդկանց հետ հաղորդակցվում ես, թե ինչ է արել Քրիստոսը քո կյանքում, այդ մարդու գլխին քարոզ մի՛ կարդա: Մի՛ մոտեցիր այս վերաբերմունքով. «Ես քեզնից լավն եմ»: Եվ մի՛ ասա մարդկանց, թե ինչ սխալների մեջ են նրանք, կամ որ դժոխք են գնում: Դրական պատգա՛մ հաղորդիր: Կիսվի՛ր մարդկանց հետ, թե ինչ է Աստված արել քո կյանքում: Թող Սուրբ Հոգին նրանց հանդիմանի մեղքի համար:

Բ. Ինչպե՞ս սկսել օգտագործել հինգ քայլերը:

Հիմա, երբ դու արդեն ընդհանուր առմամբ հասկանում ես հաջողակ քրիստոնյա դառնալու հինգ քայլերը, գործելու ժամանակն է: Հինգ քայլերը պարզապես իմանալը քեզ չի փոխի:

Աստված քեզ ստեղծել է նպատակով, որ դու անես այն բարի գործերը, որ Նա նախատեսել է քեզ համար: Տե՛ս Եփեսացիներին 2:10: Աստծո ծրագիրը, Իր տեսակետից, քեզ համար լի է հաջողությամբ: Քեզ համար ունեցած Նրա ուղին լցված է ազատությամբ և նպատակով:

Սակայն սատանան նույնպես ծրագիր ունի քեզ համար: Ամեն մի քայլը, որ դու անում ես դեպի Աստված, կատաղեցնում է սատանային: Նա ամեն բան կանի, որպեսզի հուսահատեցնի քեզ, մոլորեցնի և խորտակի: Սատանան չի ուզում, որ դու վայելես այն հաջողությունը, որ Աստված ունի քեզ համար: Սատանան ուզում է, որ դու մեղքի կապանքների մեջ լինես:

Այնպես որ, դու ընտրություն ունես. ուշադրությունդ բևեռի՛ր՝ հետևելու այն ուղուն, որ Աստված է նախատեսել քեզ համար. ճշմարիտ հաջողության ուղին: Կամ էլ դու կարող ես հետևել այն հնարավորություններին, որ սատանան է դնում քո առաջ, և որից էլ կհայտնվես ավելի մեծ կապանքների մեջ:

Հետևյալ մտքերը նախատեսված են քեզ օգնելու համար, որպեսզի սկսես կիրառել հաջողակ քրիստոնյա դառնալու հինգ քայլերը: Ամենակարևոր ռազմավարություններից մեկը, որը քեզ կօգնի հաջողության այս հինգ քայլերի հարցում, այն է, որ փնտրես գործնական միջոցներ՝ Աստվածաշնչի ուսուցումները վերցնելու և քո ամենօրյա ապրելակերպի մեջ գործի դնելու համար: Դու պետք է ամեն օր աղոթես և Աստծո օգնությունը խնդրես այս հարցում:

1. Իմաստալից հատվա՛ծ ընտրիր Սուրբ Գրքից:

Սուրբ Գրքի իմաստալից հատվածն այն է, որն ուղղակիորեն վերաբերում է այն հարցին, խնդրին կամ հետաքրքրությանը, որ դու ունես:

2. Ժամանա՛կ հատկացրու Սուրբ Գրքից անգիրներ անելու համար:

Ինքդ քեզ համար նպատա՛կ դիր, թե շաբաթական կամ ամսական քանի համար պետք է անգիր անես: Փորձի՛ր կիրակի օրն ավելի շատ ժամանակ հատկացնել համարներ անգիր անելու վրա: Տե՛ս Եսայի 58:13-14:

3. Ժամանա՛կ հատկացրու Աստծո Խոսքի շուրջ խորհելու համար

Աստծո Խոսքի շուրջ խորհելը հիմնված է այն գաղափարի վրա, որ պետք է կյանքին նայել Աստծո տեսակետից: Ի՞նչ է Աստված *մտածում* այս բանի վերաբերյալ: Դու կարող ես ժամանակ անցկացնել Աստծո Խոսքի հետ նախքան քնելը, քանի որ օրվա վերջի կարևոր մտքերը մնում են ողջ գիշերվա ընթացքում և օգնում են կարգավորել քո վերաբերմունքները հաջորդ օրվա համար: Տե՛ս սաղմոս 63:5-6:

4. Մտածի՛ր Աստծո Խոսքի շուրջ, երբ այն, ինչ դու անում ես, չի պահանջում քո ողջ ուշադրությունը:

Բ Օրինաց 6:7-ը օրվա մեջ չորս ժամանակներ է առանձնացնում, թե երբ մենք կարող ենք մտածել և խոսել Աստծո Խոսքի շուրջ.

- ա) Երբ դու տանն ես (օրինակ, ճաշի ժամին, կամ երբ հանգստանում ես, կամ ինչ-որ գործ անում)
- բ) Երբ գնում ես զբոսնելու (կամ որևէ տեղ ես գնում մեքենայով կամ գնացքով):
- գ) Երբ գնում ես քնելու:
- դ) Առավոտվա առաջին գործը:

5. Օգնության համար դիմի՛ր մեկ կամ երկու ընկերոջ:

Դու, հնարավոր է, հեշտությամբ հուսահատվես, եթե այս նախագծի հարցում փորձես ամեն բան միայնակ անել:

Բայց եթե լինի մեկը, ում հետ կկարողանաս խոսել, դա կքաջալերի քեզ, որպեսզի շարունակես առաջ գնալ: Նպատակն է՝ դիր ընկերոջդ հետ, և իրար հետ ստուգեք՝ տեսնելու, թե արդյո՞ք հասել ես դրանց:

Ահա մի քանի սուրբ գրային համարներ, որոնք քեզ կօգնեն՝ հասկանալու Աստծո մտքերը, նպատակներն ու զգացմունքները.

Մատթեոս 5-7	Կողոսացիներին 3
Հովհաննես 15	Ա Թեսաղոնիկեցիներին 4
Ա Կորնթացիներին 13	Եբրայեցիներին 12
Հռոմեացիներին 6-8	Հակոբոս 1
Գաղատացիներին 5	

Աճը, որ դու որպես քրիստոնյա ունենում ես, իրական բավարարվածություն է բերում քո սրտին: Աստծո տեսակետից իրական հաջողությունը բերում է ներքին խաղաղություն՝ անկախ այն բանից, թե որքան դժվար է դառնում կյանքը: Այս գլխում մենք խոսեցինք տարբեր բաների մասին, որ մենք կարող ենք անել՝ հոգևորապես, մտավոր և զգացմունքային առումով աճելու համար: Հակոբոս 1:2-4-ը և Հռոմեացիներին 5:3-5-ը քաջալերում են մեզ՝ ընդունելու դժվարին փորձությունները, երբ դրանք գալիս են, քանի որ Աստված կօգտագործի դրանք՝ մեր մեջ բնավորություն և զորություն զարգացնելու համար:

Հոմեագիներին 5:3-5.

«Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև պարծենում ենք նեղությունների մեջ, գիտենալով, որ նեղությունը համբերություն է առաջ բերում, և համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Եվ հույսը չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը մեր սրտերում սփռված է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց»:

Աճելու հետ միասին, դու պետք է աշխատես մաքուր կյանք և ներքին համոզվածություն զարգացնել: Հաջողակ քրիստոնյա լինել՝ չի նշանակում ամեն օր զգուշորեն հնազանդվել Աստծո 650 օրենքներին: Իրական հաջողությունը կայանում է ներքին փոփոխության մեջ, այն, որ դու հնազանդվես Աստծո օրենքներին, քանի որ ուզում ես: Քո անձնական արժեքները պետք է նմանվեն Հիսուսի ունեցած արժեքներին:

Անհնարին է Աստծո ուզած անձնավորությունը դառնալ սեփական ջանքով և աշխատանքով: Անկախ այն բանից, թե որքան եռանդուն ես դու աշխատում այդ ուղղությամբ, դու միշտ էլ Աստծո ուզածին չես հասնի: Ահա թե ինչո՞ւ է Նա մեզ տվել Սուրբ Հոգին, Ով մեր Ուսուցիչն է, Առաջնորդը, Ուղղություն ցույց տվողն ու Օգնականը: Նրա օգնությամբ դու կարող ես վստահորեն դիմագրավել յուրաքանչյուր օրվա փորձությանը: Եթե դու վստահում ես Նրան, Նա քեզ կտա զորություն՝ քեզ հանդիպող ցանկացած դժվարություն հաղթահարելու համար:

Երբ դու ընկնում ես, պատրա՛ստ եղիր խոստովանել դա: Մի՛ խաբվիր և մի՛ մտածիր, որ հասուն քրիստոնյաներն ընդհանրապես մեղք չեն գործում: Այդպես չէ: Հասունության իրական նշանն արտահայտվում է քո սխալի հանդեպ քո իսկ վերաբերմունքի մեջ: Դու խոստովանում ես քո սխալները, եթե անգամ ոչ ոք չի տեսել քո սխալը կամ մեղքը: Դու այն խոստովանում ես՝ ելնելով քո ներքին համոզմունքից, ոչ թե արտաքին ճնշումից: Քո կյանքում իրական հասունությունը դրսևորվում է նրանով, որ դու արդարացնում ես Սուրբ Հոգուն այն բանի համար, ինչ Նա անում է քո կյանքում:

Գլուխ 3.

Սուրբ Հոգի

Այս դասընթացին մենք բավականին շատ խոսեցինք Սուրբ Հոգու և հաջողակ քրիստոնյաներ դառնալու ճանապարհին մեզ օգնելու հարցում Նրա ունեցած դերի մասին: Ինչքան կամ ինչպե՞ս ես դու ճանաչում Սուրբ Հոգուն: Քո պատկերացման մեջ Նա սովորաբար ուրվակա՞ն է: Մեկից տասը սանդղակի վրա, քանի՞ միավորով կրնո՞ւթյազրեիր, թե որքան լավ ես դու ճանաչում Սուրբ Հոգուն: Ավելի մանրամասն դիտարկենք, թե ով է Նա և ինչ է անում մեր կյանքում:

Ա. Ո՞վ է Սուրբ Հոգին:

Աստվածաշունչը լավագույն տեղն է՝ հայտնաբերելու համար, թե ով է Սուրբ Հոգին: Հին Կտակարանում շատ քիչ է գրված Սուրբ Հոգու մասին: Իսկ Նոր Կտակարանը շատ բան է ասում Նրա մասին: Սկզբում պարզաբանենք այն մի քանի սխալ գաղափարները, որ կան Սուրբ Հոգու մասին:

Սուրբ Հոգին Հիսուս Քրիստոսը չի: Հիսուսն Իր հետևորդներին ասաց, որ Իր մահից և հարությունից հետո Նա վերադառնալու է երկինք: Մակայն Նրա հետևորդները մենակ չէին մնալու: Հիսուսն ասաց, որ Սուրբ Հոգին պետք է գա, որպեսզի օգնի նրանց: Հիսուսը ոչ մի անգամ չասաց, որ Ինքը Սուրբ Հոգին է:

Սուրբ Հոգին Հայր Աստծո անուններից մեկը չէ: Հիսուսը ոչ մի անգամ չի նկարագրել Իր երկնային Հորը՝ որպես Սուրբ Հոգի: Նոր Կտակարանի գրողները ոչ մի անգամ չեն ասել, որ Սուրբ Հոգին նույն անձնավորությունն է, ինչ՝ Հայր Աստվածը: Բայց և այնպես, Աստվածաշունչը հստակ նշում է, որ Սուրբ Հոգին մտերմորեն կապված է Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի հետ:

1. Սուրբ Հոգին անձնավորություն է:

Հովհաննեսի Ավետարանը մանրամասն տեղեկություններ է տալիս, թե ինչ ասաց Հիսուսն Իր աշակերտներին Սուրբ Հոգու վերաբերյալ: Հովհաննեսի 13-16 գլուխներում Հիսուսը Սուրբ Հոգու մասին խոսում է՝ որպես անձնավորության: Հովհաննես 16:7-11-ում, Հիսուսը բացատրում է մի քանի բաներ, որ Սուրբ Հոգին կանի այս աշխարհում:

Սուրբ Հոգին ինչ-որ անհասկանալի ոգի չի, որ սավառնում է աշխարհով մեկ: Նա իրական անձնավորություն է, և Նրան չպետք է դիմենք որպես ոչ-անձի: Եփեսացիներին 4:29-32 մատնանշում է, որ Սուրբ Հոգին զգացմունքներ ունի. մենք կարող ենք վշտացնել Նրան: Նա նաև ունի միտք և կամք: Տե՛ս Հռոմեացիներին 8:27 և Ա Կորնթացիներին 12:11:

2. Սուրբ Հոգին Աստված է:

Աստծո հատկություններից մեկը, որ Նրան առանձնացնում է բոլոր արարածներից, Նրա ամենագոյությունն է: Նա ներկա է բոլոր տեղերում միևնույն ժամանակ: Աստվածաշունչը հստակորեն ուսուցանում է, որ եթե Աստծո Սուրբ Հոգին չի ապրում քո մեջ, ուրեմն դու ճշմարիտ քրիստոնյա չես: Տե՛ս Հռոմեացիներին 8:9: Միակ ձևը, որ Սուրբ Հոգին կարող է ապրել միլիոնավոր քրիստոնյաների մեջ միաժամանակ, այն է, որ Նա ունի կարողություն՝ ներկա լինելու ամենուրեք միևնույն պահին:

Նոր Կտակարանը կարդալիս դու կտեսնես, որ գրողներն ասում են, որ Սուրբ Հոգին Աստված է, ոչ թե հրեշտակ կամ այլ արարած: Օրինակ, Պետրոսն ասում է, որ Սուրբ Հոգին է առաջնորդել այն մարդկանց, ովքեր գրել են Աստվածաշնչի գրքերը: Տե՛ս Բ Պետրոս 1:20-21:

3. Սուրբ Հոգին հավասար է Հայր Աստծո և Հիսուսի հետ:

Ո՛չ Հիսուսը, ո՛չ էլ Սուրբ Գրքի հեղինակները, ոչ մի ազամ Սուրբ Հոգուն Հայր Աստծուց ցածր չեն դասել: Այս գրքի մնացած հատվածում մենք կտեսնենք, որ Սուրբ Հոգին, Հայր Աստվածն ու Հիսուսն ունեն ծառայության իրենց առանձին ասպարեզները՝ որպես Աստված: Հավասարության մակարդակ է երևում, երբ Սուրբ Գրքի գրողները գրում են Սուրբ Հոգու մասին: Նա ճշմարիտ Աստված է և ամբողջական Աստված: Նա «փոխնախագահ» կամ #3 անձնավորություն չէ: Նա միասնական է Հայր Աստծո և Որդի Աստծո հետ: Շատ քրիստոնյաներ այս Երեք անձերի մեկությունն անվանում են Սուրբ Երրորդություն: Այդ երեք անձնավորություններն են՝ Հայր Աստվածը, Որդի Աստվածը և Սուրբ Հոգի Աստվածը: Նրանք երեք առանձին Աստվածներ չեն:

Բ. Ի՞նչ է անում Սուրբ Հոգին քո կյանքում, երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա:

Անգամ մինչև ճշմարիտ քրիստոնյա դառնալը Սուրբ Հոգին խորապես հետաքրքրված է մարդկանց կյանքով: Աստված մեղավորներին սիրում է նախքան նրանց որոշումը՝ արձագանքել Իր սիրուն:

1. Նա հանդիմանում է քեզ մեղքի համար:

Սուրբ Հոգին սկսում է քեզ տեղեկացնել մեղքի մասին, երբ դեռ փոքրիկ երեխա ես: Հովհաննես 16:6-11-ը մատնանշում է, որ Սուրբ Հոգին գործում է ողջ աշխարհում՝ հանդիմանելով մարդկանց՝ իրենց մեղքերի համար, և ցույց տալով, որ ավելի լավ կյանքով ապրելու հնարավորություն կա: Սուրբ Հոգին մարդկանց հետ խոսում է նրանց խղճմտանքի միջոցով: Եթե նրանք ջանան լռեցնել իրենց խղճմտանքի ձայնը, ապա կարող են հասնել մի կետի, երբ այլևս չեն լսի Սուրբ Հոգու ձայնը, երբ Նա հանդիմանի նրանց՝ իրենց խղճմտանքի միջոցով:

Որոշ դեպքերում Սուրբ Հոգին դիմում է ծայրահեղ միջոցների՝ մեղավոր մարդու ուշադրությունը գրավելու համար: Գործք 9-րդ գլուխը նկարագրում է, թե ինչպես Պողոսը կուրացավ և լսեց իր հետ խոսող Աստծո ձայնը: Մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի լսենք Սուրբ Հոգուն: Մենք երաշխիք չունենք, որ Աստված կդիմի ծայրահեղ միջոցների մեզ հետ խոսելու համար: Եթե մենք գիտենք ճշմարտությունը և որոշում ենք անտեսել այն, մեզ լուրջ հետևանքներ են սպասվում:

Մարդը, ով ճշմարիտ քրիստոնյա չէ, Սուրբ Գրքում նկարագրվում է որպես «հոգևորապես կույր»: Մեղավորները հաճախ չեն հասկանում իրենց մեղքերի լուրջ հետևանքները: Սատանան նրանց խաբել է, որպեսզի հավատան, որ իրենց ապրելակերպը նորմալ է: Սուրբ Հոգին գալիս է և ամեն մեկին ասում. «Քո ներսում խորը դատարկություն կա: Դու չես կարող ամբողջությամբ բավարարել քո կարիքները: Միայն Աստված կարող է լցնել քո ներքին խորը դատարկությունը»: Կարծում եմ՝ քեզ համար դժվար չէ հիշել այն դատարկության զգացողությունը, որ դու ունեիր նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը:

Զսխալվես. Սուրբ Հոգին հանդիմանում է մեղքի համար բոլոր մարդկանց, այլ ոչ թե միայն վատերին: Հռոմեացիներին 3:23-ն ասում է, որ բոլորը մեղք գործեցին: Եթե դու դեռ ճշմարիտ քրիստոնյա չես դարձել և ինքդ քեզ ասում ես. «Ես չեմ զգում, որ Սուրբ Հոգին ինձ որևէ մեղքի համար հանդիմանում է», ուրեմն դու չես լսում Նրան: Եթե դու դժվարանում ես հասկանալ, թե ինչ մեղքեր ես գործում, ուրեմն աղոթի՛ր և խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ քո ներսում պարզորոշ խոսի քեզ հետ, որպեսզի մեղք գործելիս իմանաս:

Սակայն, միևնույն ժամանակ, մի՛ պահանջիր Աստծուց՝ խոսել քեզ հետ, երբ դու գիտակցաբար խախտել ես Աստծո օրենքներից մեկը: Օրինակ, եթե փող ես գողանում (ոչ որ *պատահաբար* ուրիշի փողը չի գողանում), դու գիտես, որ խախտում ես Աստծո օրենքը: Մի՛ պատճառաբանիր՝ ասելով. «Ինձ համար գողություն անելը նորմալ է, քանի որ Աստված չխոսեց ինձ հետ և չասաց, որ դա վատ է»: Նա արդեն խոսել է Աստվածաշնչում: Երբ դու գիտես ճշմարտությունը, պատասխանատու ես հնազանդվել դրան:

Երբ Սուրբ Հոգին բացահայտում է մեղքի իրական բնույթն ու դրա մահացու հետևանքները, նա նաև մարդուն հայտնում է այլընտրանքը՝ նոր կյանք

Քրիստոսում: Աստված կների քեզ, երբ դու ընդունես քո մեղքերը և խոստովանես դրանք:

2. Նա քեզ մոտեցնում է Քրիստոսին:

Սուրբ Հոգին մարդկանց մոտեցնում է Աստծուն: Մեղավորները չէ, որ գտնում են Աստծուն, Աստված է, որ գտնում է մեղավորներին: Նա սիրում է ցանկացած մեկին այս աշխարհում և սիրում է քեզ՝ նույնիսկ նախքան քո մեղքերից դարձի գալն ու Նրան ընդունելը:

Սուրբ Հոգին առաջնորդում է քեզ կյանքի վերաբերյալ իրական ճշմարտության մեջ: Հովհաննես 16:13-ն ասում է, որ Սուրբ Հոգին քեզ կառաջնորդի ամբողջ ճշմարտության մեջ, ոչ թե ճշմարտության մի մասի մեջ: Ուշադրություն՝ ն դարձրու «առաջնորդել» բառին: Այն ընթացք է ենթադրում: Սուրբ Հոգին ակնթարթորեն քեզ չի տա Իր ողջ ճշմարտությունը: Նա ուզում է, որ դու վայելես Նրա ճշմարտությունը, այլ ոչ թե ընդամենը միտքդ լցնես աստվածաշնչյան փաստերով:

3. Նա գալիս է և ապրում քո հոգում:

Երբ մարդը որոշում է կյանքը տալ Աստծուն և սկսում է հետևել Նրան, Սուրբ Հոգին գալիս է և ապրում նրա ներսում: Հռոմեացիներին 8:9-ը պարզաբանում է, որ սա ակնթարթային փոփոխություն է: Հենց որ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, Սուրբ Հոգին գալիս է քո կյանքի մեջ: Նա չի սպասում մեկ օր, մեկ շաբաթ, կամ մեկ ամիս՝ նախքան քո կյանքի մեջ գալը: Սուրբ Հոգին ուզում է ակտիվորեն գործել քո կյանքում, անել ավելին, քան պարզապես մեղքի համար հանդիմանելը: Նա ուզում է քեզ օգնել՝ հոգևորապես աճելու և հասուն քրիստոնյա դառնալու համար:

Փրկության պահին մարդն իր ներսում նոր կյանք է ունենում: Սուրբ Հոգին է այս նոր կյանքը բերում քո մեջ:

Հռոմեացիներին 8:11.

«Իսկ եթե Նրա Հոգին, որ հարություն տվեց Քրիստոսին, ձեր մեջ է բնակվում, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի Իր Հոգով, որ բնակվում է ձեր մեջ»:

Սուրբ Հոգին չի գալիս քո մեջ՝ քո կյանքի մի անկյունում լուռ նստելու, երբ դու ամեն օր շարունակում ես անել այն, ինչ ուզում ես: Նա ուզում է ակտիվորեն մասնակցել քո կյանքում: Առաջիններից մեկը, որ Սուրբ Հոգին ուզում է անել, այն է, որ ուզում է՝ դու իմանաս, որ ճշմարիտ քրիստոնյա ես: Աստվածաշունչն ասում է. «Հոգին Ինքը վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո որդիներ ենք» (Հռոմեացիներին 8:16):

Մի՛ գարնացիր, եթե կասկածները լցնեն միտքդ. «Միգուցե ես ճշմարիտ քրիստոնյա չեմ: Ինչպե՞ս կարող եմ համոզված լինել, որ դա ճիշտ է ինձ համար: Ես չեմ լսում Աստծո ձայնը: Ես ոչ մի փոփոխություն չեմ զգում»: Այսպիսի խոհեր կարող են գրոհել քո միտքը՝ փորձելով գողանալ քեզնից այն վստահությունը, որ Աստված ուզում է քեզ տալ: Դու պետք է վստահես՝ ինչ Աստվածաշունչն է ասում: Եթե դու անկեղծորեն խոստովանել ես քո մեղքերն ու խնդրել Հիսուսին՝ դառնալ քո կյանքի Առաջնորդը, ուրեմն վստահի՛ր, որ դա ճիշտ է քեզ համար: Կանգնի՛ր Աստվածաշնչի խոստումների վրա:

Սկզբում, հնարավոր է, քեզ համար դժվար լինի լսել Սուրբ Հոգու ձայնը, երբ Նա խոսում է քեզ հետ: Մի՛ սպասիր, որ Աստված բարձրաձայն պետք է խոսի քեզ հետ: Նա հազվադեպ է այդպես խոսում: Լավագույն ձևը, որով դու կարող ես սովորել լսել Նրան, ամեն օր աղոթելն է. «Սո՛ւրբ Հոգի, օգնի՛ր ինձ այսօր լսել Քեզ, երբ դու ինձ հետ խոսես»: Հնարավոր է, դու արդեն ծանոթ ես, թե ինչպես է Նա հանդիմանում մեղքի համար: Հիմա նույն ձևով լսի՛ր Նրան, երբ Նա ամեն օր ավելի ու ավելի է քեզ առաջնորդում Աստծո ճշմարտության մեջ:

Գ. Ի՞նչ է անում Սուրբ Հոգին քո կյանքում այն բանից հետո, երբ դու արդեն դարձել ես ճշմարիտ քրիստոնյա:

Սուրբ Հոգու գործը հենց նոր է սկսվում, երբ դու որոշում ես ճշմարիտ քրիստոնյա դառնալ: Նա շատ ավելին է ուզում անել, քան պարզապես քո մեղքերի համար քեզ հանդիմանելը: Նա կդառնա քո մշտական ուղեկիցն ու օգնականը, եթե դու Նրան տաս այդ հնարավորությունը:

1. Սուրբ Հոգին օգնում է քեզ՝ դառնալ հաջողակ քրիստոնյա:

Նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը քո հոգին մահացած էր: Հիմա, երբ դու ճշմարիտ քրիստոնյա ես դարձել, Սուրբ Հոգին ապրում է քո մեջ: Նա ուզում է ամեն օր առաջնորդել քեզ և օգնել՝ հասուն քրիստոնյա դառնալու համար: Նա ուզում է, որ դու սկսես Նրա ուսուցումները կիրառել քո կյանքի բոլոր ասպարեզներում: Դու կարող ես սկսել՝ վայելելով Նրա միջոցով փրկվելու ուրախությունը:

Հոմեաղիներին 8:6-8.

«Որովհետև մարմնավոր միտքը մահ է, իսկ հոգևոր միտքը՝ կյանք և խաղաղություն: Քանի որ մարմնավոր միտքն Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում, և չի էլ կարող: Եվ նրանք, որ մարմնավոր են, չեն կարող գոհացնել Աստծուն»:

Հիմա, երբ դու ճշմարիտ քրիստոնյա ես դարձել, եկող ամիսների ընթացքում կհանդիպես շատ առիթների, երբ պետք կլինի որոշումներ ընդունել: Արդյո՞ք դու կանես այն, ինչ *դու* ես ուզում անել: Կամ, միգուցե, դու որոշես անել այն, ինչ Աստված է ուզում: Քո կամքի մի մասը ցանկանում է շարունակել հին սովորություններով ու վերաբերմունքներով ապրել: Քո կյանքի որոշ ասպարեզներում հին ցանկություններդ, հնարավոր է, ակնթարթորեն չվերանան: Սակայն Աստված քեզ ուժ կտա, որպեսզի քո վրայից հանես հին ապրելակերպը և հագնես նոր վերաբերմունքներն ու արձագանքները, որոնք հավատարիմ քրիստոնյա լինելու նշաններն են:

2. Սուրբ Հոգին քեզ կօգնի հասկանալ Աստծո ճշմարտությունը:

Հիմա, երբ դու արդեն դարձել ես ճշմարիտ քրիստոնյա, Աստծո ճշմարտության քո իմացությունը պետք է զարգանա: Աստվածաշունչը խոստանում է, որ Սուրբ Հոգին քեզ կառաջնորդի ամբողջ ճշմարտության մեջ: Տե՛ս Հովհաննես 16:13-ը: Եթե ուզում ես սովորել՝ ինչպես հաջողակ դառնալ, ուրեմն պետք է Աստվածաշնչից սովորես այն ուսուցումները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Աստված ուզում, որ դու ապրես:

Աստվածաշունչը լի է գործնական խորհուրդներով, թե ինչպես պետք է սիրել մարդկանց, բարություն ցույց տալ, հաղթահարել բարկությունն ու վախը, ինչպես իմաստությամբ վարվել փողի և ժամանակի հետ, ինչպես լինել լավ ծնող, ինչպես վարվել դժվար մարդկանց հետ և այլն: Մենք պետք է ժամանակ հատկացնենք մեր օրակարգի մեջ՝ Աստվածաշունչ ուսումնասիրելու և Սուրբ Հոգուց օգնություն խնդրելու համար:

3. Սուրբ Հոգին քեզ կօգնի դեմ կանգնել փորձություններին:

Անակնկալի չգաս, եթե սատանան ցանկանա քեզ փորձել, որ մեղք գործես: Նա իր ողջ ուժերի ներածին չափով կփորձի կործանել քո նոր փոխհարաբերությունն Աստծո հետ: Սակայն դու չպետք է վախենաս այդ փորձություններից: Աստվածաշունչը լցված է խոստումներով, որ Աստված կօգնի քեզ, երբ փորձությունները գան: Դու չպետք է զիջես այդ փորձություններին:

Հռոմեացիներին 8:12-13.

«Ուրեմն եղբայրներ՝ ր, մենք պարտական չենք մարմնին, ըստ մարմնի ապրելուն: Որովհետև, եթե մարմնավորապես ապրեք, կմեռնեք, իսկ եթե Հոգով մարմնի գործերը սպանեք, կապրեք»:

Աստված խոստացել է ազատվելու միջոց տալ, երբ մեղքի փորձություններ գան քո դեմ: Տե՛ս Ա Կորնթացիներին 10:13: Աստվածաշունչը մատնանշում է, որ

Աստված կօգտագործի քեզ հանդիպող բոլոր փորձություններն ու խնդիրները՝ քո մեջ այնպիսի բնավորություն և ներքին ուժ ձևավորելու համար, որոնք հանդիսանում են հաջողակ քրիստոնյայի նշանները: Տե՛ս Հակոբոս 1:2-4 և Հռոմեացիներին 5:3-5: Սուրբ Հոգին քեզ կօգնի՝ քո կարիքներն ու ցանկություններն Աստծո ուզած ձևով բավարարելու համար, որպեսզի դու ստիպված չլինես զիջել սատանայի փորձություններին:

Սակայն իրատես լինենք: Ոչ ոք կատարյալ չէ: Նույնիսկ մեծագույն քրիստոնյաներն են սխալներ անում և փորձությունների մեջ անկում ապրում: Աստված չի թփթփացնում ուսիդ ու ասում. «Բան չկա: Ես չեմ էլ սպասում, որ դու կատարյալ լինես: Հաջորդ անգամվա համար հաջողություն եմ մաղթում»: Մեղքը շարունակում է մնալ մեղք: Դու պետք է խոստովանես քո մեղքերը և հեռանաս դրանցից: Սատանան կմեղադրի քեզ և կփորձի հուսահատեցնել, որ չշարունակես քրիստոնեական կյանքդ: Սակայն ուշադիր նայիր խոստումին, որ տրված է Հռոմեացիներին 8-րդ գլխում:

Հռոմեացիներին 8:1-2, 4.

«¹Հետևաբար, հիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Քրիստոս Հիսուսի մեջ են, ովքեր մարմնապես չեն քայլում, այլ ըստ Հոգու: ²Որովհետև Քրիստոս Հիսուսի մեջ եղող կյանքի Հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի և մահվան օրենքից: ⁴Որպեսզի Օրենքի արդարությունը կատարվի մեր մեջ, որ մարմնականին չենք հետևում, այլ՝ Հոգուն»:

Մենք պարտավոր ենք սուրբ կյանք ապրել. հեռացնել մեղքը մեր կյանքից և դրա փոխարեն անել այն, ինչ Աստված է մեզ Աստվածաշնչում ասում, որ անենք: Բոլոր քրիստոնյաներն էլ հանդիպում են փորձությունների, և Սուրբ Հոգու մեծագույն պատասխանատվությունները մեկը մեկ ապագա վտանգների մասին զգուշացնելն է և փորձությունից դուրս գալու՝ Աստծո ճանապարհը ցույց տալը: Եթե մենք անտեսենք Նրա մեղմ ձայնը և առաջ գնալով մեղք գործենք, այդ ժամանակ Սուրբ Հոգին մեզ կհանդիմանի մեր գործած մեղքի համար: Նա մեզ կօգնի աճել թե՛ մեր հաջողությունների, թե՛ անհաջողությունների միջոցով, եթե մենք Նրան թույլ տանք սովորեցնել մեզ:

Փորձությունները հաղթահարելու թեման ավելի մանրամասնորեն քննարկված է *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի՝ *Փորձություններ* բաժնում:

4. Սուրբ Հոգին Իր պտուղներն է բերում քո կյանքում:

Նոր Կտակարանի մի քանի հաստատվածներում, հաջողակ քրիստոնյա դառնալու գործընթացը նկարագրվում է հին մարդը հանելու և նոր մարդը հագնելու օրինակով: Աստված ուզում է, որ դու ամբողջովին նոր անձնավորություն դառնաս: Արդյո՞ք դա նշանակում է, որ դու պետք է դադարես լինել այնպիսին, ինչպիսին որ ես, և ուրիշ մարդ դառնաս: Ոչ: Դա նշանակում է՝ հանել հին սովորություններն ու

վերաբերմունքները և փոխարինել դրանք բնավորության այնպիսի գծերով, որոնք քեզ ավելի նման կդարձնեն Հիսուսին: Դա նշանակում է՝ «հագնել» վերաբերմունքներն ու սովորությունները, որ Հիսուսն ուներ, երբ ապրում էր երկրի վրա: Որո՞նք են այդ հոգևոր որակները:

Գաղատացիներին 5:22-23-ը նշում է ինը հատկություններ և դրանք նկարագրում որպես «Սուրբ Հոգու պտուղ»: Եթե դու Սուրբ Հոգուն քո կյանքում գործելու ազատություն տաս, ժամանակի ընթացքում կտեսնես, թե ինչպես են այս հատկություններն ավելի ու ավելի աճում քո կյանքում:

Գաղատացիներին 5:22-23.

«Բայց Հոգու պտուղն այս է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն. այսպիսի բաների դեմ օրենք չկա»:

Դու պետք է համագործակցես Սուրբ Հոգու հետ, եթե ուզում ես քո կյանքում աճելիս տեսնել այս հատկությունները: Փոփոխություններն ինքնաբերաբար, պարզապես եկեղեցի հաճախելով չեն գա: Գաղատացիներին 5:24-25-ը շատ հստակ է խոսում այս մասին:

Գաղատացիներին 5:24-25.

«Եվ նրանք, ովքեր Քրիստոսին են, մարմնավորը խաչը հանեցին կրքերով և ցանկություններով մեկտեղ»:

Փորձի՛ր գտնել հնարավորություններ քո առօրյա գործնական կյանքում՝ «Հոգու պտուղը» դրսևորելու համար: Երբ դու տանն ես, ճաշում ես, աշխատանքի ես, հանգստանում ես ազատ ժամանակ, կամ ինչ-որ բան ես անում, փորձի՛ր ականջներդ պահել Սուրբ Հոգու ձայնին: Նա ամեն օր քեզ կառաջնորդի, որպեսզի այս «պտուղը» քո կյանքում դառնա հոգևոր հատկությունների հզոր արտահայտություն՝ ինչպիսին որ Հիսուսի կյանքում էր:

5. Դու կարող ես Սուրբ Հոգով մկրտվել:

Նոր Կտակարանը բազմաթիվ տեղերում պատմում է Աստծո տարբեր պարզևների մասին, որ Նա տալիս է Իր զավակներին: Այս պարզևներից մեկը հաճախ կոչվում է Սուրբ Հոգու մկրտություն: Այսօր բոլոր եկեղեցիները չէ, որ համակարծիք են, թե ինչ է իրենից ներկայացնում այս պարզևը, կամ ինչպես այն կարող է օգտագործվել այսօր: Եթե դու հետաքրքրված ես այս պարզևով, կամ այն քրիստոնյաները, որոնց հետ դու շփվում ես, քաջալերում են քեզ, որ աղոթել Սուրբ Հոգու մկրտության համար, ապա կա՛նգ առ և սկզբում պատասխանի՛ր այս հարցերին.

Ինչո՞ւ եմ ես ուզում Սուրբ Հոգով մկրտվել:

Ի՞նչ եմ անելու պարզևը, եթե Աստված այն ինձ տա:

Եթե չես կարողանում պատասխանել այս հարցերին, ուրեմն սկզբում պետք է ուսումնասիրես Աստվածաշունչը և գտնես, թե ինչ է ասում Աստված ի պատասխան այս հարցերին: Աստված Իր գավակներին պարզներ չի տալիս, որ նրանք մրցանակի նման դրանք դնեն գրադարակի վրա և ասեն. «Նայե՛ք, ես հենց նոր մի հատ էլ ստացա»:

Աստված Իր գավակներին պարզներ տալիս է հիմնականում երկու պատճառով.

1. Նրա հետ ավելի մտերիմ փոխհարաբերություններ զարգացնելու համար:
2. Որ կարողություն տա՝ Նրան նվիրված մեր ծառայության մեջ դառնալ ավելի արդյունավետ այն ժամանակ, երբ մենք անում ենք այդ ծառայությունը:

Մենք այս գլխում նորից կանդրադառնանք վերոնշյալ երկու կետերին, իսկ հիմա ուշադրություն դարձնենք այն բանի վրա, թե ինչ կապ ունեն այդ կետերը Սուրբ Հոգու մկրտության հետ:

Ա. Ի՞նչ է Սուրբ Հոգու մկրտությունը:

Որոշ քրիստոնյաներ շփոթություն ունեն այս պարզի վերաբերյալ, քանի որ չեն կարողանում հասկանալ, թե ինչ է ասում Աստվածաշունչն այդ մասին: «Դու արդեն Սուրբ Հոգի ունե՞ս», - հարցնում են նրանք: Կամ՝ «Դու Սուրբ Հոգով լցվե՞լ ես»: Երկու դեպքում էլ, հավանաբար, նրանք նկատի ունեն. «Դու ստացե՞լ ես այն պարզը, որ մենք անվանում ենք Սուրբ Հոգու մկրտություն»:

Պարզն ու փրկությունը նույնը չեն: Փրկությունն Աստծո մեծագույն պարզն է մեզ համար: Եվ ի՞նչ գին՝ Նա վճարեց դրա համար: Հիսուսը մահացավ խաչի վրա, որպեսզի մենք ձրիաբար ստանանք փրկության պարզը: Երբ մենք փրկվում ենք, հենց նույն պահին Սուրբ Հոգին գալիս է ու բնակվում մեր մեջ: Այսպիսով, երբ ճշմարիտ քրիստոնյային ինչ-որ մեկը հարցնում է. «Դու Սուրբ Հոգի ունե՞ս», նա կարող է անկեղծ և վստահ ասել. «Այո՛»:

Ուրեմն, ի՞նչ է Սուրբ Հոգու մկրտությունը: Դու պետք է ինքնուրույն ուսումնասիրես Աստվածաշունչը և խնդրես Սուրբ Հոգուն՝ առաջնորդել քեզ այս պարզի վերաբերյալ ամբողջ ճշմարտության մեջ:

Ահա թե ինչպես են որոշ քրիստոնյաներ պատասխանում այդ հարցին: Սուրբ Հոգու մկրտությունը հոգևոր պարզն է՝ տրված Աստծուց Իր գավակներին: Աստվածաշունչի Գործք Առաքելոց գրքի 2-րդ գլուխը պատմում է, թե երբ Աստված առաջին անգամ Սուրբ Հոգին տվեց Իր գավակներին. Հիսուսի հարությունից հետո: Երբ Պետրոսը ժողովրդին բացատրություն էր տալիս, մեջբերում արեց Հովել 2:28-32-ը, որը մարգարեություն էր այն մասին, թե Աստված ինչպես էր Իր Հոգին թափելու բոլորի վրա: Այս պարզը միայն մի քանի ընտրյալ հոգևոր առաջնորդների համար չէ: Այն հասանելի է Աստծո բոլոր գավակներին:

Գործք 2-ում և Նոր Կտակարանի այլ տեղերում Սուրբ Հոգու մկրտության ֆիզիկական ապացույցն այն է, որ նրանք սկսեցին խոսել լեզուներով, որոնք մինչ այդ չէին սովորել: Նրանցից յուրաքանչյուրը սկսեց աղոթել և փառաբանել Աստծուն այնպիսի բառերով, որ մինչ այդ չգիտեր: Դա Սուրբ Հոգին էր խոսում: Նրանք պետք է թույլ տային, որ Սուրբ Հոգին դեկավարեր իրենց խոսքը:

Արդյո՞ք սա է ամբողջ իմաստն այս պարզևի. պարզապես ասել բառեր, որ նախկինում երբևէ չեն իմացել: Որոշ քրիստոնյաներ ասում են. «Այո՛»: Մյուսները պատասխանում են. «Ո՛չ, այս պարզևն ավելին է պարունակում»: Ինչքա՞ն ավելի: Նրանք ասում են, որ օտար լեզուներով խոսելն ընդամենն այս հոգևոր պարզևի արտաքին կողմն է: Այն հոգևոր պարզև է, և դրա ազդեցությունն էլ հիմնականում մեր հոգու վրա է տեղի ունենում, որն արտաքինից չի երևում: Արդյո՞ք այս պարզևն ակնթարթային լուծում է քո բոլոր խնդիրների համար: Ո՛չ: Իրականում Աստծո ոչ մի պարզև էլ ակնթարթորեն չի լուծի քո խնդիրները:

Սուրբ Հոգու մկրտությունը քեզ հզոր զգացմունքային ապրումներ տալու համար չէ, որ դու Աստծո ներկայության մեջ «վերանաս»: Թեև շատ քրիստոնյաներ իրականում փորձառել են մեծ ուրախություն, որ այս պարզևը բերել է նրանց կյանքում: Ուրախությունն այս պարզևի հաճելի օգուտներից մեկն է, որը, սակայն, Աստծո՝ Իր զավակներին տալու առաջնային նպատակը չէ:

Աստված այս պարզևը տալիս է Իր զավակներին՝ նրանց հոգևոր կյանքը կառուցելու համար: Այդ հոգևոր աճը պետք է ուղղակիորեն ազդի մարդկանց հետ անցկացրած մեր առօրյայի վրա:

Դժվար կլինի այնպիսի սահմանում տալ Սուրբ Հոգու մկրտության վերաբերյալ, որ բոլոր քրիստոնյաները համաձայնեն: Ճիշտ նույն ձևով դժվար է նաև սահմանել, թե ինչ է սերը: Սերն ավելին է, քան համբուրելը, գրկելը, քաղցր զգացողությունները, ջերմ մտքերը: Դա ավելին է, քան ֆիզիկական գործողությունները: Սակայն եթե իրոք սիրում ես մեկին, դու այն ցույց ես տալիս քո գործողությունների և զգացմունքների միջոցով: Իրական սերն ազդում է քո մտքերի վրա, սակայն այն ավելին է, քան սիրուց առաջացած մտքերը:

Եթե դու, իրոք, ուզում ես հասկանալ, թե ինչ է սերը, պետք է փորձառաբար իմանաս այն: Ինչքան շատ փորձառես, այնքան ավելի լավ կհասկանաս այն: Նույնը կարելի է ասել Սուրբ Հոգու մկրտության մասին: Դու չես կարող այն ամբողջությամբ հասկանալ, քանի դեռ չես փորձառել քո հոգում և ամբողջ կյանքում:

Բ. Ի՞նչ էս անելու այս պարզևի հետ, եթե Աստված դա քեզ տա:

Աստված իմաստուն Հայր է, և Նա առանց հասկանալու շաղ չի տա Իր պարզևներն Իր զավակների վրա և թույլ չի տա, որ նրանք սխալ օգտագործեն դրանք: Նա մեզ խորը սիրով է սիրում և ուզում է Իր սերը ցույց տալ մեր հանդեպ:

Նա նախանձավոր է. Իր պարզները տալիս է նրանց, ովքեր ավելի խորը հաղորդակցություն են ուզում ունենալ Իր հետ: Աստված երբեք չի հարկադրում Իր պարզները քո կյանքում: Եթե դու չես ուզում Սուրբ Հոգու մկրտությունը, Նա այն քեզ չի տա: Ուրեմն ինչո՞ւ պետք է քրիստոնյան ցանկանա այս պարզը: Ինչո՞ւ կարող է այն օգնել նրան:

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը, ի՞նչ տեղի կունենա այս պարզն ունեցող քրիստոնյայի հետ: Գործք 1:8-ը ցույց է տալիս մի օգուտ, որ կունենան նրանք, ովքեր ընդունում են այս պարզը: Նրանք կստանան մեծ ներուժ՝ ոչ-քրիստոնյաներին վկայելու Քրիստոսի և Նրա փրկարար գործության մասին:

Հիմնական ձևերից մեկը, որ այս պարզը կարող է ազդել մեզ վրա, Աստծո հետ ավելի մտերիմ փոխհարաբերություններ զարգացնելն է: Պողոսը գրում է այն կարևոր դերի մասին, որ այս պարզն ուներ իր աղոթքի կյանքում: «Գոհանում եմ իմ Աստծուց, որ բոլորիցդ ավելի լեզուներ եմ խոսում» (Ա Կորնթացիներին 14:18):

Օտար լեզուներով խոսելու պարզը (լեզուներ, որ դու չես սովորել) կարող է մի հզոր միջոց լինել՝ քեզ Աստծուն մոտեցնելու համար: Սակայն այդ պարզը պատշաճ ձևով օգտագործելու պատասխանատվությունը քեզ վրա է: Հենց միայն այն, որ դու ունես այդ պարզը, չի նշանակում, որ մյուսներից լավ քրիստոնյա ես: Եթե այդ պարզը դրական ազդեցություն չի ունենում Աստծո հետ քո փոխհարաբերությունների վրա, ուրեմն դու պատշաճ կերպով չես օգտագործում դա:

Այդ պարզը քո մեջ պետք է առաջացնի առավել մեծ ցանկություն՝ Աստծուն ավելի մոտ գնալու: Այն պետք է մղի քեզ՝ հանել մեղսալից վերաբերմունքներն ու սովորությունները և հագնել հոգևոր բնավորության գծերը: Այդ պարզը պետք է ուժեղ ազդեցություն ունենա մարդկանց հետ քո փոխհարաբերությունների վրա: Նրանք ավելի ու ավելի պետք է տեսնեն, որ Աստված քո կյանքի մեջ իրական սեր և ուրախություն է բերել: Եթե պարզն ունենալով դու ավելի սիրող քրիստոնյա չես դառնում, ուրեմն ճիշտ չես օգտագործում այն:

Երբ ստանաս Սուրբ Հոգու պարզը, մի՛ զարմացիր, եթե ակնթարթային փոփոխություններ չտեսնես քո կյանքում: Սակայն այդ պարզը քեզ գործություն կտա՝ աճելու և ավելի քրիստոսակերպ դառնալու: Եթե դու թենիսի նոր ռակետ ես նվեր ստացել, դեռ չի նշանակում, որ արդեն վարժ թենիս խաղացող ես դարձել: Սակայն, մյուս կողմից, երբեք չես կարող լավ թենիս խաղացող դառնալ, եթե թենիսի ռակետ չունենաս: Նմանապես՝ Աստծո պարզը քեզ համար շատ հնարավորություններ կբացի հոգևոր աճի և ծառայության համար:

Մեկ այլ ազդեցություն, որ այս պարզը պետք է ունենա քո կյանքում, քո մեջ սովորելու ավելի մեծ ցանկություն առաջացնելն է: Դու առավելագույնս կուզենաս իմանալ Աստծո մասին և այն, թե ինչպես ավելի լավ ծառայես Նրան: Եթե հպարտությունը, ըմբոստությունն ու «Ես ամեն ինչ գիտեմ» վերաբերմունքն է քո մեջ գլուխ բարձրացնում, ուրեմն դու չես կարողանում այդ պարզն օգտագործել Աստծո ուզած ձևով:

Գ. Ինչպե՞ս կարող ես ընդունել Սուրբ Հոգու պարգևը:

Դու ոչինչ չես կարող անել, որպեսզի վաստակես Աստծո այս պարգևը: Դու չես կարող վաստակել փրկությունը, կամ Աստծո ցանկացած այլ պարգև: Աստված Իր պարգևները տալիս է Իր զավակներին: Նա է որոշումներ կայացնում: Ընդունելի է, երբ դու Աստծուն տեղյակ ես պահում քո հետաքրքրությունների մասին: Ենթադրենք՝ երեխան ասում է իր ծնողներին. «Ես Սուրբ Ծննդյան համար գիրք չեմ ուզում»: Կարծում ես նրանք կլսե՞ն, թե ինչ է ասում երեխան: Իհա՛րկե, կլսեն: Նրանք սիրում են իրենց երեխային և ուզում են այնպիսի նվեր տալ, որը կօգնի և նաև կհետաքրքրի նրան:

Աստված չի հարկադրում Իր պարգևներն Իր երեխաներին: Մյուս կողմից՝ չենք կարող Նրան ստիպել, որ մեզ տա այդ պարգևը: Երբեմն, երեխաները շարունակ խնդրում են ու խնդրում, մինչև ծնողները զիջում են և տալիս այն, ինչ նրանք են ուզում, միայն թե տանը հանգստություն լինի: Մակայն Աստված չի զիջում մեր ճնշումներին:

Եթե դու Աստծուց պարգև ես ուզում, ապա քո առաջին և մեծագույն առաջնայնությունը դարձրու Նրան մոտենալը: Աշխատի՛ր հնազանդվել Աստվածաշնչի երկու ամենամեծ պատվիրաններին: Ի՞նչը կարող է կյանքում ավելի կարևոր լինել, քան աստվածաշնչյան այս երկու պատվիրաններին հնազանդվելը: Տե՛ս Մարկոս 12:28-31:

Որտե՞ղ ես դու տեսնում, որ Հիսուսն աղոթեր Հայր Աստծուն և ասեր. «Խնդրում եմ, ինձ այսօր ավելի շատ պարգևնե՛ր տուր»: Լինո՞ւմ է, որ դու մոտենաս քո սիրելիին ու ասես. «Ես քեզից այսօր նվեր եմ ուզում»: Մա անշահ կամ ճիշտ ընկերություն կառուցելու ձև չէ: Դրա փոխարեն փորձի՛ր գտնել միջոցներ, թե ինչպես կարող ես անել այն, ինչ Աստված է քեզ ասել, որ անես: Եթե հայտնվել էս մի իրավիճակում, երբ դու գործություն չունես անել այն, ինչ Աստված է ուզում, որ դու անես, խնդրի՛ր Նրա օգնությունը: Եթե դու ավելի շատ սիրո կարիք ունես, խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ՝ սիրել տվյալ բարդ անձնավորությանը:

Եթե դու ուզում ես ավելի մոտենալ Աստծուն, ասա՛ Նրան: Նա կլսի: Եթե դու ուզում ես ավելի արդյունավետ կերպով վկայել ոչ-քրիստոնյաներին, ասա՛ Աստծուն: Եթե դու ավելի շատ հոգևոր գործության կարիք ունես քո կյանքում, խնդրի՛ր Աստծո օգնությունը: Ամբողջ ժամանակդ մի՛ անցկացրու Աստծուց պարգևներ խնդրելու վրա: Դրա փոխարեն ժամանակդ անցկացրո՛ւ Աստծուն ավելի մոտենալու համար: Նա սիրում է Իր պարգևները լցնել նրանց վրա, ովքեր իրենց առաջնայնությունները հաստատուն են պահում:

6. Նա տալիս է Սուրբ Հոգու պարգևներ:

Սուրբ հոգին ուզում է մեզ տալ գործություն՝ հաջողակ քրիստոնյաներ լինելու համար: Նա մեզ ուզում է նախապատրաստել ծառայության համար: Աստծո միտքը ծառայության վերաբերյալ միայն քարոզիչ կամ միսիոներ լինելը չէ: Նա ուզում է,

որ Իր զավակներից յուրաքանչյուրը գործի Իր համար հենց այնտեղ, որտեղ նա գտնվում է: Ոչ ոք այնքան փոքրիկ չէ, որ Աստված չկարողանա տեսնել նրան: Նա կառաջնորդի քեզ, սակայն դու պետք է գործես: Երբ դու գործում ես, Նա հարթում է քո ճանապարհը և տալիս է քեզ այն օգնությունը, որի կարիքն ունես:

Սուրբ Հոգու որոշ պարզևներ պետք է գործածվեն հրապարակային ծառայության համար: Կորնթացիներին ուղղված առաջին նամակի 12-րդ գլուխը բացատրում է այդ պարզևները և այն, թե ինչպես պետք է դրանք գործածվեն:

Հռոմեացիներին 12-րդ և Եփեսացիներին 4-րդ գլուխները բացատրում են պարզևների բազմազանությունը, որ Սուրբ Հոգին տալիս է քրիստոնյաներին: Այդ պարզևները պետք է գործածենք ամենօրյա կյանքում և աշխատանքում: Հռոմեացիներին 12:6-ը և Եփեսացիներին 4:7-ն ասում են, որ Աստված յուրաքանչյուր քրիստոնյայի տվել է առնվազն մեկ հոգևոր պարզև: Եփեսացիներին 4:12-13-ը բացատրում է այդ պարզևների նպատակը:

Եփեսացիներին 4:11-13.

«Եվ Նա մի քանիսին տվեց, որ առաքյալներ լինեն, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և ուսուցիչներ՝ սրբերի կատարելության համար, ծառայության գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար. մինչև բոլորս էլ հասնենք հավատի միասնության և Աստծո Որդու ճանաչմանը. կատարյալ մարդ լինելու, Քրիստոսի կատարյալ հասակի չափն ունենալու»:

Առաջին Պետրոս 4-րդ գլուխը նույնպես նշում է Սուրբ Հոգու պարզևների մասին: Ինչ պարզև էլ որ դու ունենաս՝ ուսուցանելու, ողորմելու, հավատի, բժշկության, կառավարման կամ քարոզելու, Աստված ուզում է, որ այն օգտագործես ի նպաստ Իր թագավորության տարածման: Աստված ուզում է, որ քո ունեցած պարզևն օգտագործես Իրեն՝ ն փառք բերելու համար, ոչ թե քեզ:

Սուրբ Հոգին ուզում է առանձնահատուկ տեղ ունենալ քո կյանքում: Դու ես որոշում թե՛ Նա ինչ չափով կարող է ազդեցություն ունենալ քո առօրյայում: Եթե անտեսես Նրա օգնությունը, ամեն օր պարտություններ կկրես: Ամենակարևոր բանը, որ դու կարող ես անել, ամեն օր Աստծուն ավելի մոտենալն է: Երբ Աստվածաշունչ ես կարդում, ինդրի՛ր Սուրբ Հոգուն՝ օգնել քեզ: Փնտրի՛ր գործնական հնարավորություններ, թե ինչպես կարող ես Սուրբ Հոգու պտուղները կիրառել քո ամենօրյա գործունեության մեջ: Մովորի՛ր լսել Նրան, երբ Նա խոսում է քո սրտի հետ: Այս ուղին, որ Աստված նախանշել է քեզ համար, քեզ կտանի իրական հաջողության:

